

ԿԱՆԹ-ԵՂ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈԿԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2001

9(-11)

3-21

ԿԱՆԹԵՂ

ՄԱՍԿԱՆ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՄ

1

3286



ԱՄՐԻԿ

«ԱՄՐԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2001



ԴՏՀ 001
ԳՄԴ 72
Կ - 203

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ**

Կ - 203 Կանթեղ: Գիտական հոդվածների ժողովածու: -
Երևան, Աստղիկ, 2001, 208 էջ:

Գլխավոր խմբագիր

Լիլիթ Արզումանյան բանասիրական գիտ. թեկնածու

Խմբագրական կոլեգիա

- Սևակ Արզումանյան << ԳԱԱ թղթ.անդամ, բանասիրական գիտ. դոկտոր
- Հովհաննես Բարսեղյան բանասիրական գիտ. դոկտոր
- Սեդա Գասպարյան բանասիրական գիտ. դոկտոր
- Ելենա Կարաբեգովա բանասիրական գիտ. դոկտոր
- Հենրիկ Հովհաննիսյան արվեստագիտության դոկտոր
- Գագիկ Ղազինյան իրավաբանական գիտ. դոկտոր
- Ալեքսանդր Մանասյան փիլիսոփայական գիտ. դոկտոր
- Աշոտ Մելքոնյան պատմական գիտ. թեկնածու

КАНТЕХ – СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ
KANTEGH – COLLECTED ARTICLES

Կ $\frac{1401000000}{0136(01)-2001}$ 2001

ԳՄԴ 72



ISBN 99930 - 74 - 07 - 1 © Արզումանյան Լ., 2001 թ.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՍՏԵՂԻ «ՄԵՐ ՊԱՐՏԵԶԻ ՕՐԱԳՐԵՆ» ԾԱՐՔԸ

Համաստեղի գրականությունը՝ «Գյուղից» մինչև «Առաջին Սերը» ինքնակենսագրական վերջին վիպակը ամերիկահայ դարձած գյուղացու կյանքի, երազի, հույսի պատմությունն է: Նրա գրականության հերոսը հայն է՝ հայրենի եզրերում ապրող, արարող գյուղացին, որն օտար ակերում էլ չի կորցնում ազգային ու մարդկային դեմքը: Հողի ծայնը, շունչը, հոգեբանությունը, կանչը և կարողը Համաստեղի հերոսների էությունն է, գոյության նրանց ձևը, պարտադրված պայմաններում գոյատևելու միակ հնարավոր եղանակը: Դա հոգևոր ու հոգեկան աշխարհ է՝ երազի գծած սահմաններում, հեքիաթի գույներով, երջանկության համով ու բույրով: Համաստեղի հերոսներն արձատներով գյուղից են, իրենց հոգու խորքերում պահում ու սերնդեսերունդ են փոխանցում անձրևի բերած առատության հրաշքը, աշխարհի տարբեր ծայրերում տեսնում գյուղի սրնգահարին, լսում նրա սրինգի՝ հայրենի լեռներից ծորացող երգը, և այդ ամենն անջինջ է, անմոռաց առաջին սիրտ պես:

Այս ամենը մարդու, աշխարհի, կյանքի օրենքներից դուրս է, հաճախ հակասում է աշխարհում իշխող ուժի իրավունքին, բայց հենց նրանով, որ դուրս է ընդհանուրից, դառնում է նաև անհասանելի, ուրեմն՝ ենթակա չէ որևէ օրենքի: Սա հայի աշխարհն է: Այստեղ գործում են սիրո, հույսի, կարոտի, հողի, արարման աշխարհին, մարդկությանը, դժբախտաբար, անբացատրելի հոգևոր օրենքներ, որոնք մաքառման, տառապանքի արդյունք են: Գրողն ինքն այդ լեռնաշխարհի ծնունդ է: Քանի դեռ աշխարհում կան, ապրում են թեկուզ երկու երկու կա ու կլինի հայ ժողովուրդը գոյության իր ներքին օրենքներով, աշխարհի հզորների ու նրանց հզորագույն բանակների վրա ծիծաղելու իր անբացատրելի հոգևոր ուժով:

Համաստեղը հողի մարդ էր ու հողի երգիչ՝ բառի ամենախոր իմաստով: Նրա հողապաշտ ու արևապաշտ լինելը հաստատում են նաև նամակները: Այսպես՝ «Հիմակուց արդեն մտահոգուած եմ պարտեզով և անհամբեր կ'սպասեմ, որ գարունը բացուի որ սկսեմ պարտեզի աշխատանք ընել»¹,- 1944-ի փետրվարի 7-ին գրել է Համաստեղը Հ.Խաչմանյանին: Կամ «Գարունը եկաւ կարծես, ինծի համար կ'սկսի նաև պարտեզի աշխատանքը: Թեև անճարակ եմ այդ տեսակ աշխատանքին մէջ և սակայն կը սիրեմ»²,- 1946-ի մարտի 18-ին գրել է Հովհաննէս Ավագյանին ուղղված նամակում:

Հայրենի երկրին, նրա երկնքի՝ նմանը չունեցող կապույտին, հոգին ջերմացնող արևին կարոտ, «Արարատի շուքը» օրհնության պես երազող Համաստեղը Բոստոնում խնամում էր պարտեզն ու ծաղիկներ աճեցնում՝ հոգում «Հայաստանի դիւբալկան վերջալոյսը՝ այնպէս գունագեղ ու երագական»³: «Յուսաբեր»ի՝ 1981-ի դեկտեմբերի վերջին մի քանի թվերում տպագրված են Խ.Ներսեսյանի հուշերը Համաստեղի մասին: «-Վաղը պիտի մաքրեմ պարտեզը սա տերեւներէն, խոտերէն: Մեր գիւղը յիշեցնող աշխատանք մըն է, ըսաւ մեղմօրէն, ինքնիրեն խօսելու պէս, իր սրտին հետ, առանձին»,- պատմում է Ներսեսյանը:

Համաստեղը Ս.Վրացյանի «Հայրենիք»⁴ տարեգրքում հրատարակել է երեք գողտրիկ մանրապատում՝ «Մեր պարտեզի օրագրէն» ընդհանուր խորագրով՝ «Կարմրալանջը», «Իրիկնամուտ», «Առաջին ծիւղ»: Այս ստեղծագործությունները զեղանկարի տպավորություն են թողնում (Համաստեղը կասեր՝ «բառերով նաշխ բանուած» են) և լրացնում են գրողի պատմվածքների շարքը («Տափան Մարգար», «Փիլիկ աղբար», «Չալո», «Զրոյց շունի մը հետ», «Սքիփին», «Նապաստակի մը օրագիրը», «Լուքաս աղբարը եւ աղավնին» և այլն), որոնցում բնությունն ու կենդանի արարածներն ապրում են, զգում, մարդու գրուցընկերն են, նրա պես օրագիր են պահում: «Մեր պարտեզի օրագրէն» շարքի կենտրոնական «դեմքը» փոքրիկ թռչնակն է՝ կարմրալանջը, որն «իր շարժումին մէջ անհամբեր է», իսկ ծայրի մեջ կարոտ կա՝ «կուրծքի ծիրանագոյն կանանչով բռնկուած»: Գույնի ու ծայրի կախարդանքի մեջ թռչնակը կարծես խոսում է, մարդկանց ավետում գարնան գալուստը: Հեքիաթը շարունակվում է. «հազար հազար սերմերը հողին տակէն իմացան անոր

ոտքերուն ծայրը, իրարու ետեւէն պայթեցան մէկ մէկ յուզումով ծայն տուին իրարու»: Բնանկարը շնչում է «հազար գոյներու երաժշտութիւնով, անձրեւէն նոր լուացուած երկնքի մաքուր կապտութիւնով, հողին, արեւին անսահման բարութիւնով»:

Շռայլ գույների, թռչնակի, հողի, ծառերի, սկյուռի ու գորտերի երգի զեղանկարի վրա սև բծի տպավորություն է թողնում տիկին Եպրթիի մահը: Կարմրալանջն սպասում է, որ դուռը բացվի, սպասում է ու չի հասկանում տիկին՝ Եպրթիի ուշանալու պատճառը: Մարդն էլ էր չքնաղ բնանկարի մասը, բայց հիմա չկա: Գարնանային ուրախության մեջ մի պահ հնչեց թախծոտ մեղեդին ու հանգավ: Գարուն է ... Միայն մարդը զգաց մահվան սառը շունչը, որը հավից գարնանային բնանկարի ջերմությունից, բայց կա, իրական է կենդանի ամեն մի էակի համար:

Համաստեղը նամակներում հաճախ է դժգոհում՝ ձմռան ցրտից: Վաղ գարնանից սկսած՝ գրողն ապրում էր մոտակա ձմռան սարսափեցնող ակնկալիքով: «Արդէն հիմակուց մտահոգութիւն առած եմ որ ամառը պիտի անցնի և շատ արագ և մենք նորէն պիտի մտնինք ձմեռի մէջ: Բացուած ծաղիկներուն մէջ իսկ իմ այս մտահոգութիւնը կը զգամ»,-⁵ դժգոհում է Համաստեղը Հ.Ավագյանին գրած նամակում 1946-ի մայիսին: Իսկ մեկ տարի անց՝ 1947-ի նոյեմբերին, նույն հասցեատիրոջը գրում է. «Ամառը եկաւ անցաւ, անցան նաև պարտեզի ծաղիկները ... Չմեռը չեմ սիրեր, սրտով և ամեն բանով աւելի կը ծանրանամ ինչքան ձմեռը մօտենայ: Արդէն ձմեռի մի քանի խիստ օրեր ունեցանք այստեղ: Ե՛հ, աշխարհը մեզի չեկաւ, ինչպէս կ'ըսեն, այլապէս կարելի էր ձմեռ ժամանակ երթալ հոն՝ ուր վարդերը կը բացուին ու միջոցին մէջ նարնջեհիներու հոտ կայ»⁶:

Կյանքի վերջին տարիներին, երբ բանվորի տքնաջան աշխատանքի հոգնությունն անտանելի դարձավ սիրելի կնոջ՝ տիկին Սրբուհու երկարատև հիվանդության պատճառով, ավելի սաստկացավ վախը ձմռան ցրտից: 1963-ի հուլիսի 26-ին Համաստեղը գրում է Արամ Հայկազին. «Թէև կանանչ ու Արև, արդէն մտահոգուած եմ գալիք ձմեռով: Տխրութիւնով կը տեսնեմ որ ծաղիկները հետզհետէ կ'անցնին և մնացած ծաղիկներուն մէջ կարծես աշունի հոտը կայ ...

Ալ կրճատ երևակայել թե ձմեռի սարսափը ինչպես բռնած է զիս և այս՝ ամեն տարի»:⁷

1947-ի գարնանը Համաստեղը կուսակցական գործերով եղավ Կալիֆորնիայում ու մինչև կյանքի վերջը հիշում էր իր տեսած շքեղ, անճաման գարունը: Ամիսներ անց՝ օգոստոսի 28-ին, Համաստեղը գրում է Վ.Հայկին. «Չեր Բալիֆորնիան շատ սիրեցի, կլիմայի շատ լավ տեսնեմ այդտեղ էի. գարուն էր ու միջոցին մեջ նարնջենիներուն բուրմունքը կար միշտ: Այդ շրջանին հրաշալի էր Ֆրեզնոյի երկինքն ու Արևը: Կ'ըսեն նաև Ֆրեզնոն գեղեցիկ է, երբ խաղողները կը հասունանան և ես կրճատ երևակայել կախուած խոշոր կոյտերը խաղողներուն»:⁸ 1947-ի հուլիսի 8-ին Հ.Ավագյանին ուղղված նամակում Համաստեղն այսպես է ներկայացնում իր տեսած գարունը. «Ֆրեզնոյի մեջ գտայ հրաշալի Արև մը որ կարելի էր գինիի նման փարչի մեջ լեցնել ու խըմել» և ավելացնում. «Առաջմ պարտեզի աշխատանք կ'ընեմ, այս տարի աւելի լավ ծաղիկներ ունիմ»:⁹

Անմոռանալի է գարնանային իրիկնամուտի նկարագիրը համանուն մանրանկարում: Վերջալույսը ողողում է ամեն ինչ՝ երկնասլաց բարդիների կատարներից մինչև հողն ու հողից դուրս եկող անձրևորդերը: Գունային խաղին ուղեկցում է փոքրիկների երգը: «Փոքրիկները կ'երգեն դրացիի պարտեզին մեջ» տողը հանգերգի պես կրկնվում է: Այդ երգի մեջ են ապրում անձրևից թարմացած հողի ու մարդկանց երազանքները, տերևների, մեղուների ձայները: Տեղին է հիշել Համաստեղի «Անձրև»ը. երկընթից թափվող կենարար կաթիլները շունչ ու հոգի են պարզում շնչավոր ու անշունչ բոլոր էակներին, և վերընծայվում են Թորիկ Դուկասի ու Գանձակ Պարսամի երազանքները, շարունակվում է նրանց թարեկամությունը:

Երզը տարածվում է, արծազանքվում բոլոր արարածների հոգիներում:

Այստեղ է նաև մեր հին ծանոթը՝ կարմրալանջը, որը «դեռ թաց ու թարմ գոյներով նկարի մը պես» թառել է որթատունկին, «աչքի տակով կը դիտե» հող փորող մարդուն, «կը սպասե անհամբեր»: Տիեզերական բարության, հողի ու մարդու, բնության մտերմության կախարդական մթնոլորտում թռչնակն անձնավորվում է վստահում մարդուն: Փոքրիկների ուրախ երգի, հողի աշխատանքի, մարդու հաճելի հոգնության մեջ վերահաստատվում է պապերից

եկած՝ հողի ու մարդու միասնության անխախտ օրենքը, որը ներկված է արտերի կանաչով և ունի հողի թարմ բուրմունքը: Բայց «մեր երանելի պապերի» ու կանաչ երազների աշխարհը չէ սա: Ճիշտ է, դրախտ հիշեցնող գարնանային պարտեզը հեռու է ռազմաճակատի գծից, բայց արծազանքներն այստեղ էլ են հասնում: Պատերազմը՝ «աշխարհի անխոնջ ու եռանդուն ինքնասպանությունը» (Մ.Ռեմարկ), աղճատում է պարտեզի գունանկարը: Մարդու ու մարդկային կյանքի օրենքները՝ պիտի բխեն իրիկնամուտի շքեղ գույներից, հողի անսահման բարությունից ու երեխաների երգից: Բայց մարտադաշտում հոսում է զինվոր դարձած հողագործի, գրողի, նկարչի, երաժիշտի արյունը: Այլ խոսքով՝ արարելու կոչված մարդը զբաղված է... մարդասպանությամբ: Սա մարդու սահմանած կարգն է:

Բնությունն ունի իր օրենքները, հողի մեջ ընկած սերմն անպայման ծլարձակում է: Այգու անկյունում՝ իրար վրա թափված զանազան գործիքների խառնակույտի, կոտրած ծաղկամանների տակ, հրաշքով բացվում են «կարմիր կապոյտ ծաղիկները, մեղուները իրենց ճամբաներէն շեղելու չափ գեղեցիկ»: Խորհրդավոր այս անկյունում է սկսվում գարունն ու տարածվում աշխարհով մեկ: Հավվող ձյունը կարծես «անձրեւէն թրջուած ճագարի ձեւ կ'առնէ եւ տեսնես ճագարի մը պէս ալ փախեր է յանկարծ»: Անծանոթ ծաղիկը «արկածախնդիր անվախութեամբ» արևին է պարզում իր առաջին ծիլերը՝ չվախենալով նույնիսկ ձյունից, «աղուտի մը պէս պպզած»: պաշտպանվում ձնհալի մեջ լողացող ճնճողուկներից: «Ամեն տարի տաճարի մը մօտեցող հաւատաւորի մը պէս» գարնան հերթական հրաշքին սպասող գրողի սրտում հանկարծ ծնվում է կասկածը՝ ի՞նչ կլինի, եթե մի օր ծաղիկն անհետանա: Որքան վարակիչ է կարմրալանջի վերադարձը ողջունող, իրիկնամուտի գույներով, ծաղկի առաջին ծիլերով հմայված մարդու ուրախությունը, նույնքան էլ հասկանալի է պատերազմի, կորուստների ցավից իմաստնացած նրա հոգու տագնապը: Եթե ծաղիկը չլինի, աշխարհից կանհետանա հեքիաթը: Հեքիաթ, որով ապրում էր Համաստեղը տարիներ շարունակ: «Պարտեզին մեջ ցանած շատ բաներ, ծաղիկներու շատ տեսակներ և սակայն Արև չեն տեսներ որ ըսեն թե դուրսը աշխարհ մը կայ և ծիլն և չեն մտածեր որ իրենց սպասող կայ անհամբեր»¹⁰: 1948-ի հունիսի 10-ին գրել է Համաստեղը Հ.Ավագյանին:

«Գեղունի» հանդեսի՝ 1947-ի համարում տպագրված է Համաստեղի մանրապատումների շարքի չորրորդ մասը՝ «Պանն էր անցեր իմ պարտեզին»:¹¹ Ամառային գիշերվա հրաշքներն սկսվում են բարակ անձրևից, տերևների սոսափյունից, ծղրիղների երգից: Բնանկարի գույներն ու բույրերը շարժման մեջ են դրվում անվերջ բզզոցից այն թավամազ մեղվի, որը զարնվում է ապակուն: Ու երբ մեղուն մեջքի վրա ընկնում է գորգի վրա, սենյակում թագավորում է լուրջան կախարդանքը: Հեղինակը կարդում է Արիստոֆանի «Գորտերը» կատակերգությունը: Չկա իրականը հեքիաթից, անցածից բաժանող որևէ պատնեշ. անցյալն ու ներկան, ամառային գիշերն ու անուրջը, դիցաբանությունն ու բնությունը ծուլված են, ապրում են մարդու երևակայության մեջ, դուրս են իրականության, կյանքի օրենքներից, ավելի ճիշտ՝ դառնում են հեքիաթի պես իրական, հեքիաթի պես անիրական միջավայր, որտեղ բնությունն ապրում է իր՝ մարդուն անձանոթ օրենքներով: Լնում աղմկում են գորտերը՝ «Արիստոֆանի «գորտեր», որ կը դիմաւորէին Դիոնեսիոսը՝ երբ անկը թիաւարէր հոգնած»: Դարերի հեռվից կարծես կրկնվում է առյուծի մորթի հագած Դիոնիսոսի շքահանդեսը, ու շաղակրատ գորտերը նորից բարկացնում են ծպտված աստծուն:

Հեքիաթի ու իրականության սահմանագծին հեղինակը պարտեզից անձանոթ ձայներ է լսում: Համաստեղը կենդանի գույներով է ներկայացնում այժմեմարդուն, որը շրջում է պարտեզում ու հեռանում լճակ տանող ճանապարհով՝ «իր սրինգին համար բռնելու երաժշտությունը գորտերու ձայնին, լճին մէջ թափուող անձրևի բարակ ձայներուն խառնուած»: Ո՞վ է ասել, թե հրաշքներ չկան: Հ.Թումանյանի «Անուշ»ի վերջին տեսարանում նկարագրված երկնքի ու երկրի հաշտության եզակի պահերից մեկն էլ որսացել ու ընթերցողին է ներկայացրել Համաստեղը: «Պանն էր անցեր իմ պարտեզին», - համոզված գրում է նա: Ընթերցողն էլ է համակվում մանրանկարի տրամադրությամբ ու կրկնում հեղինակի ասածը: Հեքիաթը վարակիչ կախարդանքով երկար ու ղեկցում է հրաշքի ականեստեսին՝ ընթերցողին:

Ս.Վրացյանը գրել է Համաստեղին. «... ի՞նչ լաւ կը լինի, եթէ հաւաքես, լրացնես և առանձին հատորի մէջ ամփոփես «Իմ պարտեզին» իմ այնքան սիրած պատմութիւնները: Կը խոստանամ այստեղ հրատարակել տալ»:¹² Ինչ-

պես հաստատում են Համաստեղի՝ Հ.Խաչմանյանին և Մ.Նուրյանին ուղղված նամակները,¹³ նրա անտիպ ձեռագրերը կազմել են հազարավոր էջեր: Ի՞նչ իմանաս, գուցե դրանց մեջ կան այս շարքի ուրիշ մանրապատումներ ևս. չէ՞ որ Համաստեղը հող մշակեց ողջ կյանքում ու միայն 1965-ի հուլիսին էր Գ.Մահարուն զանգատվում. «Մեր պարտեզի ծաղիկները արդէն կորսնցուցած են իրենց հրապոյրը»:¹⁴ Իսկ մինչ այդ անվերջ էին պարտեզի ծաղիկների հետ նրա լուռ զրույցները, և գուցե մի օր ընթերցողի սեղանին հայտնվի Ս. Վրացյանի երազած գիրքը:

«Մեր պարտեզի օրագրէն» ընդհանուր խորագրի տակ հավաքված մանրապատումներում Համաստեղը վարպետ գրչով տեղավորում է աշխարհն ու մարդուն, որ հաստատի մարդու՝ ապրելու, արարելու իրավունքն ու կամքը: Վերնագրի խորհուրդը լայն է. աշխարհն է մեր պարտեզը, որը պարտավոր ենք խնամել: Համաստեղ մարդու, գրողի համար հողի գուղձերից սկսած մինչև տիեզերք տարածվում են հողի օրենքներն ու մարդու՝ խաղաղ ապրելու կամքը: Այս մանրապատումները Համաստեղի մյուս ստեղծագործությունների պես շնչում են անսահման բարությամբ, հերքում պատերազմը, չարն ու չարիքը: Այսպիսով՝ Համաստեղի գրականության մեջ մարդ-աշխարհ ներդաշնակությունը հենվում է հողից, աշխատանքից, արարումից ծնված իմաստնության վրա, որը, դժբախտաբար, հաճախ է անտեսվում, քանի որ աշխարհում գործում են ուժի, իրավունքի օրենքները: Գրողին մարդ-աշխարհ փոխհարաբերության մեջ հետաքրքրում են մարդու իդեալը և այն աշխարհի պատկերը, որը կա, գոյություն ունի երազի օրենքներով ապրող նրա հերոսների, նաև ընթերցողի համար: Անգամ Ամերիկայի «համայնակուլ հալոցի մէջ» (Բ.Նուրիկյան) Համաստեղը խնամքով պահեց ու սերունդներին փոխանցեց «ազնուական անթիքներ» այն իրականության, որի պատահիկներն ամեն մի հայ իր հետ տարել է աշխարհի տարբեր ծագերը: Նրա «արուեստի ապրող եւ ապրեցնող շունչովը օժուն գրական գործերու»¹⁵ ծալքերում դեռ կա, ապրում է հայ գյուղը, և հնչում է հարազատ բարբառը ...

ՃԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՊԱԹ, Հակոբ Խաչմանյանի ֆոնդ, թիվ 416:
2. ՊԱԹ, Հովհաննես Ավագյանի ֆոնդ, թիվ 1308:
3. «Հայրենիք» տարեգիրք, 1946, էջ 995:
4. Լույս է տեսել Բոտոնում, 1943-1948 թվականներին:
5. ՊԱԹ, Հովհաննես Ավագյանի ֆոնդ, թիվ 1309:
6. Լույս տեղում, թիվ 1316:
7. ՊԱԹ, Արամ Հայկազի ֆոնդ, թիվ 222:
8. ՊԱԹ, Վահե Հայկի ֆոնդ, թիվ 151:
9. ՊԱԹ, Հովհ. Ավագյանի ֆոնդ, թիվ 1315:
10. Լույս տեղում, թիվ 1318:
11. Հետաքրքիր մի փաստ՝ Համաստեղի այս մանրապատումը տպագրված է «Իմ պարիկի օրագրեր» խորագրի տակ: Համաստեղի ձեռագիրը, որից հաճախ էր դժգոհում, իսկապես դժվարընթեռնելի է, ու գրողը ստիպված էր ուշադիր հետևել իր երկերի տպագրության ընթացքին: Այս դեպքում խանգարել է հեռավորությունը:
12. ՊԱԹ, Համաստեղի ֆոնդ, թիվ 234:
13. ՊԱԹ, Հակոբ Խաչմանյանի ֆոնդ, թիվ 416-421, 631:
14. ՊԱԹ, Գուրգեն Մահարու ֆոնդ, թիվ 226:
15. ՊԱԹ, Բենիամին Լուրիկյանի ֆոնդ, թիվ 113:

ԼԻԼԻԹ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

ԴԺՎԱՐ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Ռիշապած իմ սեր» պոեմը Պ.Սևակի «փախստական ես»-ի վերադարձի առաջին արտահայտություններից էր, ինքնագրում թերևս անդրանիկ ամենանշանակալից երկը: Այս ստեղծագործության տպագրությանը հեղինակը լայն ճանաչում ստացավ և Ռուսաստանում, և Հայաստանում, քանզի պոեմի անսովոր ու համարձակ «ինչու»-ները վեճերի ու տարակարծությունների մեծ ալիք բարձրացրին:

Պոեմը առաջին անգամ լույս տեսավ ռուսերեն՝ «Դժվար խոսակցություն» վերնագրով, Եվգենի Եվտուշենկոյի թարգմանությամբ («Новый мир», 1956, հ.6):

Երկրորդ անգամ պոեմը հրատարակվեց դարձյալ ռուսերեն՝ «Ես ևս այդ մասին» խորագրով, 1956 թվականին (Երևան, «Բանաստեղծություններ»):

Հայերեն լույս է տեսել միայն 1957-ին, «Սովետական գրականություն» հանդեսում «ՌՎ է մեղավոր» վերնագրով: Բանաստեղծը «Ռիշապած իմ սեր» խորագիրը տվել է պոեմին միայն 1963-ին և հրատարակել «Մարդը ափի մեջ» գրքում: Պոեմի տարբերակները լույս են տեսել կրճատումներով ու հավելումներով, իսկ վերնագրերի փոփոխությունները ցույց են տալիս, որ հեղինակը երկար է խորհել ոչ թե սոսկ վերնագրերի, այլև արծարծվող հարցերի շուրջ:

Պ.Սևակը պոեմի վրա աշխատանքը սկսել էր 1952 թվականից և համոզված էր, որ այդ գործը նոր սկիզբ էր իր կենսագրության մեջ և շարունակ անդրադառնում էր դրան կատարելով սրբագրումներ ու շտկումներ: Ընդհանրության մեջ, սակայն, պոեմը կարծես գրված է մեկ շնչով, խոհերի ու զգայմունքների հանկարծահաս ու անկասելի պոռթկումով:

Թե ինչպիսի՞ կրքով վեճեր, իրարամերժ կարծիքներ է բորբոքել պոեմը այդ մասին Սևակի կյանքի ու ստեղծագործության քաջատեղյակ Ալբերտ Արիստակեսյանը գրել է հետևյալը. «Թերևս հայ գրողի ոչ մի գործ ռուս քննադատության մեջ և ռուս ընթերցողների շրջանում այնպիսի

ազնիվ զգայմունքներ, զերծ հաշվենկաբուծությունից: Սրան է ձգտում Մայակովսկու «Այդ մասին» պոեմի հերոսը, այսինքն՝ հեղինակը: Սևակը այստեղ ավելի քան արմավական է, չի հանդուրժում ոչ մի կեղծ հաշտություն կամ փոխզիջում: Մաքուր, անխաղախ սիրո հրայրքը վեր է մարդկային բոլոր պայմանականություններից:

Աստված վկա, այսպես

Չէ՛ որ կարելի է անգամ խելագարվել:

Ախր իմ ի՛նչ գործն է՛ մարդիկ ո՛նց են անում:

Իմ ի՛նչ գործն է.

Մարդիկ շատ բան են անում,

Հազար ու մի տեսակ վա՛ր բաներ են անում:

Ես գործ ունեմ մարդկանց,

Ոչ թե ամեն կարգի նրանց արարքի հեպ.

Ես գործ ունեմ սիրո՛ւ,

Ոչ թե թաքուն կապի հրայրքի հեպ.

Միայն աղբյուրի՛ հեպ հավերժախոս ու ջինջ,

Եվ ոչ հոսանքի հեպ հեղեղային...»⁴

Թե Մայակովսկու, թե Սևակի հերոսները ներքին խոր դրամա են ապրում, իրենց սիրո մեջ կաշկանդված են մարդկային «մորալի» անհաղթահարելի կապանքներով: Եվ մինչդեռ Մայակովսկու հերոսը չկարողանալով հաղթահարել այդ կապանքները՝ փաստորեն դառնում է քաղքենիական հոգեբանության և միջավայրի զոհ, Սևակը անզիջում կրքովությամբ մերժում է քաղքենիությունը, քարայած ու կեղծ բարոյախոսության կրողներին ու հաստատում իր թիկական կրեդոն, երբ սերը փոխադարձ է՝ ոչ մի պատճառով չպետք է ու չի կարող կապանքել մաքուր զգայմունքները, ամուսնացած լինելը կամ արդեն ընտանիք ունենալն անգամ, ողջ բարոյությամբ հանդերձ, խոչընդոտ լինել չեն կարող: Իսկ ընդդիմախոս-քննադատների կարծիքով սա ապական էր խորհրդային համակեցության բարոյականությանը: Այստեղից էլ նրանց անհանդուրժողականությունը:

4. Պ.Սևակ, *Երկերի ժող.*, 1973թ., հ.3, էջ 132-133:

Սեկ ուրիշ քննադատ-ընդդիմախոս «սկզբունքորեն սխալ է» համարում անհատ-կոլեկտիվ կապի սևակյան դիրքորոշումը, նաև բանաստեղծի ընդհանրացումները, անհատի ձակարագրում կոլեկտիվի մասնակցության իրավունքի ըմբռնումը, իսկ հեղինակի հիացումը իր հերոսի հանդեպ դժվար է հասկանալ, գրել է նա⁵:

Միանգամայն պարզ էր, որ Սևակի ընդդիմախոս-քննադատները դեռ գործում էին անհատի պաշտամունքի ժամանակների գաղափարախոսության կաղապարներով, ջուր լցնելով նաև գոեթիկ-սոցիոլոգների ջրաղային:

Պոեմի հիմքում ընկած է, անշուշտ, հեղինակի կենսապատմի ինչ-ինչ փաստեր: Սակայն ստեղծագործությունը լոկ ինքնաբաբախաբարումի նպատակ չի հետապնդում, այսինքն չի դառնում զուր պոեմ-ինքնապարում: Սևակը համարձակորեն մարտահրավեր է նետել ժամանակի կեղծ բարեպաշտության դեմ, կուսակցական ժողովներով ու հրահանգներով սրբագործված կանոնիկ մրաժողության, դրգամարիկ ու համահարթված հոգեբանության դեմ: Այդպիսի մրաժողությունն ու հոգեբանությունը, ըստ բանաստեղծի՝ բացառում են կյանքի կենդանի հոսքը, կաղապարում են այն վերուստ պարտադրված երեսպաշտ և բարոյագուրկ սխեմաների մեջ: Ասել է թե՛ մարդուն դարձնում են անդեմ ու կրավորական էակ, ինչպես կասեր Չարենցը՝ ուղղակի մի չուչելո՛ անկենդան զգայմունքներով, ավելի ճիշտ՝ անզգա ու անհաղորդ:

Ի՛նչ էր պատահել, ինչի՞ մասին է «Ուշացած իմ սեր» պոեմը: Հանդիպել են իրար տղամարդ ու կին, մտերմացել, սիրել ու սիրվել: Սակայն կինն ամուսնացած է, ունի ընտանիք, երեխա: Սա դեմ է հասարակական բարոյախոսությանը, մարդիկ չեն ընդունում նման սերը: Ի՛նչ փուլթ, թե կինը չի սիրում ամուսնուն, որ փաստորեն ընտանիք չկա, «վաղուց արդեն կործանվել է», որ ծնված գեղեցիկ սիրով կարող է կազմվել մի լավ ընտանիք:

Ու՛ր է այստեղ խիղճը

Դպրողությունն ուր է,

Ու՛ր է առողջ միտքը:

5. Н. Шамота, «Оxyдожестөөенности» М. 1958г. стр. 278 («Ուշացած իմ սեր» պոեմի շուրջ ծախված բանավեճի, թե՛ր ու դեմ կարծիքների վերաբերյալ մանրամասն տես Մ.Արիստակեսյանի «Պարույր Սևակ» գրքում, 1974թ. էջ 111-114):

Հանուն փլված մի տան՝
Մեկ այլ տանիք քանդել,
Եվ ինչպիսի՜ տանիք...⁶

Պ.Սևակը ամբողջ կրթով ծառանում է այսպիսի մտայնության դեմ, որը ցավալիորեն դարձել էր կենցաղ, հոգեբանություն։ Մարդիկ դափափեցնում են կնոջը, որ իբր «ընտանիք է քանդում»։ Պոետը դա համարում է «բախտի չար կափակ, հիմար ծաղր»։ չէ՞ որ նրա կյանքը չի դասավորվել, նա «հենց ծնվել էր ընտանիքի համար, սուրբ օջախի, սիրո իր տանիքի համար»։ Իսկ եթե չի ստացվել, ի՞նչ է, դափափարված է ճակատագրով։

Եվ մի՞թեք չե՞զ դաբողդ,

Դափափեցող մարդիկ չեն իմանում,

Որ դու... հեղուկ չես դու,

Որ քո ձևը փոխես այն ամանում,

Որպեղ որ չե՞զ կածեն...

Մի՞թեք մինչև հիմա ոմանք չեն հասկացել,

Դու կենդանի՜ մարդ ես,

Ամենամարդ մարդը,

Սիրո՞ղ մարդը,

Քեզ չի կարող ձև տալ ամեն կուժ ու կուլա,

Եվ որ չորստառանի «մարդ» կոչվածը կյանքում

Շափ ավելի բարդ է,

Ջան թե հազարապատ, թեկուզ սրբագործված մի ֆորմուլա...⁷

Առանձին քննադատներ պոետի մասին գրել են, թե հեղինակը Մայակովսկուն, Սևակը «ժամանակակից կյանքի հարցերը մեծ մասամբ լուծում է ոչ թե վերացական դափողություններով կամ հռեթորական ճիչերով, այլ կոնկրետ հերոսի լիրիկական ընկալման միջոցով», թե «նոր խնդիրներ, ժամանակակից կենսական հարցեր բարձրացնելու հակումը հենց Մայակովսկու փրոպեդիաներին հեղինակը ճիշտ ուղին է»⁸։

6. Պ.Սևակ, Երկերի ժող., 1973թ., հ.3, էջ 135:

7. Լույս տեսած, էջ 135-136:

8. Սովետական գրականություն, 1956թ., հ. 7, էջ 154:

Սևակի մարդագիտությունն ուղղվում էր իրապես շփոթանալիս մտածողների ու նույն մեթոդով գործողների դեմ։ «Ռեալիստ իմ սեր» պոետը ճիշտ ժամանակի ծնունդն էր, հիրավի արդիական մի երկ, որի արժեքը հենց շոշափած հարցադրումների թարմությունն ու կենսականությունն էր, մարդկային ու եթիկական պրոբլեմների հրափայտությունը։

Անկասկած պոետում անհատի ինքնության, ազատ զգայմունքի ու մտածողության երակը ամանցքային է։ Ո՛ր այս տեսանկյունից է բանաստեղծը ելնում քաղցրեմիության, չափված-ձևված պաշտոնական հրահանգների, սերը կաղապարների ենթարկելու, մարդու անհատականությունը անտեսելու փորձերի դեմ։ Այս կորագծով նա մուտքային հարվածում, թեկուզ «կշտամբանքի խոսքեր» չի ուզում ասել, այնուհանդերձ հանդիմանում է սիրած կնոջը։

Բայց դու ո՞նց թույլ տվիր,

Որ նա՛ դառնա տերը

Ո՛ր դու չէիր սիրում

Եվ ում համար

Չէին դողում շրթերդ՝ ինչպես հիմա,

Չէին շողում աչքերդ՝ ինչպես հիմա,

Ինչպես հիմա՝ կուրծքդ չէր փրոփում կրթով։

Ինչպե՛ս դու քանդեցիր տունդ՝ քո իսկ ձեռքով։⁹

Անփորձ աղջկա սխալ էր, կյանքը դաժան վարվեց նրա հետ, բախտը չբերե՛ց, ոչ մի արդարացում չի ընդունում բանաստեղծը, որովհետև սիրո հարցում «չի ճանաչում կյանքը արդարացում»։

Բանաստեղծը չի անտեսում, ոչ էլ արհամարհում է հաճախ պատահող չար խաղերը կյանքի, երբ օգտապաշտ հաշիվներն են մեջտեղ գալիս։ Նուրբ սիրո փող՝ նուրբ մեղաքսի գերապարկություն, ջերմ սիրո փոխարեն՝ փառք մուշտակի նախընտրություն, և «Ո՛ր հիմարը կասի, թե վատ բան է բարձր աստիճանը, փողով լի գրպանը»։ Սևակյն անմիջապես Սևակը «սիրո շիրիմ» է դիտում փողով լի գրպանը, արտահայտելով իր վերաբերմունքը։

Երախտապարտ եմ ես դափարկ իմ գրպանին,

Թե չէ, ի՞նչ իմանաս, աստված չանի,

9. Պ.Սևակ, Երկերի ժող., 1973թ., հ. 3, էջ 117:




Չէ՞ որ կարող եր նա ինձ էլ գուցե
Ուրիշների հիմար դրության մեջ գցել
Կարող էին, այո՛, կարող էին ինձ էլ
«Աղվես»-ի տեղ իրենց ուսին գցել,
Իբրև մուշտակ՝ կրել,
Իբրև ոսկե քորոց՝ կրծքին խրել:¹⁰

Իրապես է բանաստեղծը. չէ՞ որ կյանքը բազմադեմ է և հաճախ՝
Թեպետ հաղթությունը միշտ նորինն է,
Սակայն հինն էլ կյանքում
Նրանով է կանգուն,
Նրանով է գորեղ
Որ նա հին է:
Իսկ «քաղքենի» կոչումն այնքան է հին կյանքում,
Որքան... ինքը կինը:¹¹

Որքան էլ ջրբաժան է գծվում քաղքենու ու սիրած կնոջ միջև,
որքան էլ պոետը չի կամենում կշտամբանքի խոսքեր ասել, այնուհանդերձ
բանաստեղծը անխնա մերժում է առևտրուրը սիրո մեջ, սեր խաղալը: Նա
մերժում է այսօր ամուսնությունը փառերի օրինակով՝ այսինքն՝ «ճանաչել
յոթը պորպիր... բայց ոչ նրան, ում դու գնացել ես մարդու»: Իսկ
ամուսնանալ անսեր, սկսած լով «թե սերն ինքը, եթե կյանքում նա կա, հեպո
մի օր կգա», բանաստեղծը ունի իր համոզմունքը:

Սակայն սերը փառք չէ,
Ոչ էլ հաջողություն,
Որ հեպո գա
եվ կամ
Բնավ չգա:
Հյուր չէ,
Որ մերթ ընդ մերթ այլելի ձեր փունը,
Մերթ պարճառի հաճույթ
Ո՛ր մերթ՝ փհաճություն,
Խանգարելով անուշ երճաշյա քունը:

10. Նույն տեղում, էջ 118:
11. Նույն տեղում, էջ 119:



Ախ, չէ՛,
Սերը հյուր չէ,
Տանը հյուր չէ սերը:
Թե բանն այդպեղ հասավ
Նա տանտեր՝ է:¹²

Պոեմում սիրո թեմային զուգահեռ արծարծվում են անհատի ներքին
ազատության, պատվի ու խղճի գերխնդիրները, որոնք էլ ինչ-որ ձևով
անպայմանորեն զուգակցվում են ստեղծագործության լեյտմոտիվին, քննվում
մեծ սիրո համապատկերում: Բանաստեղծը նույնչափ կարևորում է
մարդկային բարձր հատկանիշներն ու անձնական առաքինությունները և
այդ պատուհանից իմաստավորում հերոսի և հերոսուհու բնավորություններն
ու արաքները: Լինել կենսասեր, ամուր, ապել մեղկությունը, փոքրգոյություն
ու քծնանքը, չշլանալ փառքից:

Սակը մերժում է «քաղքենական փառքով ու գաղջ» միջավայրը,
այն ամենը ինչ փոստույս է. «չգործածվող»: Նա երազում է բնականն ու
բանականը, երազում է հաստատուն տեսնել կյանքում մարդկայինը,
գեղեցիկը: Գիտակցության այս հոսքը տեղափոխելով սիրո և ընտանիքի
ոլորտը, ապա ավանդական «եռանկյունու» բարդույթի մեջ ներքաշելով նաև
ամենասուրբ՝ երեխայի խնդիրը, բանաստեղծը չի փորվում այն
«տեսությանը», ըստ որի՝ երեխայի գոյությունը բացառում է ընտանեկան
ամրության կամ ամուսնական կապի դեմ որևէ քայլ: Կինը երեխա ունի, իսկ
սիրող տղամարդը խանդում է, որ երեխան նաև իրենը չէ:

Ո՛ր ես ոնց կուզեի,
Ոնց կուզեիր և դու,
Որ նա լիներ ինը,
Որ ինձ «հայրիկ» կանչեր,
«Հայրիկ» այնպես կոչեր,
Այնպե՛ս գոչեր,
Որ աշխարհը լսեր հոր անունը:¹³

Պոեմի 9-րդ գլուխն ամբողջապես նվիրված է հոգեբանական այս
բարդույթին («Բայց դու արդեն... արդեն մայր ես վաղուց. Բակում քո տղան
տեղում է»):

12. Պ.Սևակ, երկերի ժող., 1973թ., էջ 121:
13. Նույն տեղում, էջ 131:

է հիմա խաղում...») և Սևակը գեղարվեստական պատկերային տպավորիչ գույներով առարկայորեն տեսանելի է դարձնում վիճակի ծանրությունը.

Բայց ես գիտեմ, թե դու ոնց ես երկըրպագում,

Ոնց ես պաշտում... նրան,

Որ կոչում է քեզ «մայր»:

Ո՛ր ես, որ ո՛չ կույր եմ,

Ոչ էլ հիմար,

Միշտ մի հարցի առաջ աչք եմ փակում.-

Ո՞վ է առաջինը քո մեծ հոգում.

Ե՛ս եմ արդյոք, թե՛ նա,

Ո՛ր վա՛յ թե՛ նա...¹⁴

Ավելի քան իրավացի է ռուս քննադատը այս խնդրի իր մեկնություններում. «Ինչպիսի անբարոյականություն,- կարող է բացականչել կեղծ բարեպաշտը, կարողալով պոեմը: - Մի՞թե կարելի է օրինակ ներկայացնել էգոիստի, որ հաշվի չառնելով բարոյականությունը ուզում է կնոջը խլել ամուսնույ, մորը որդույ: Բայց ուշադիր կարդալով պոեմը, դուք պարզ կտեսնեք, որ նրա հերոսը ազնիվ և ուղղամիտ մարդն է, որ հերոսություն է ունեցել պատմել ամենաթանկի, ամենացավալի մասին, պատմել չքաշվելով, դառնորեն և արելությամբ... Բարոյականության սուր հարցերը բանաստեղծը արծարծել է լրջորեն և խոր կերպով: Դա սկզբունքային և դժվար խոսակցություն է ազնվության, ճշմարտության մասին, դա ուղղակի մարտահրավեր է քաղցենիությանը»:¹⁵

Սևակը իր հարցադրմամբ՝ «Ո՞վ է առաջինը քո մեծ հոգում», պարվար չի քաշում, ոչ էլ առաջնության հարց է դնում. նա մի բուն ու խանդոտ այրումով բացում է սիրտը, հոգին, տենդոտ խոստովանությամբ փորձում է փարատել ամեն մի կասկածանք իր անկեղծ սիրո հանդեպ.

Քոնն եմ իմ անյալով,

Իմ ներկայով,

Երազներով բուր,

Ապագայով.

Քոնն եմ ամբողջովին,

Իմ սիրելիս:

14. *Նույն տեղում:*

15. «Комсомольская правда», 1956г., 3 ноября

Սա իրավունք մի՞թե ինձ չի տալիս

Գեթ այսքանից հեղո պահանջելու,

Որ իրավունք չունես ինձ տանջելու,

Որ դու պիտի լինես իմը անվերապահ,

Իմը ուրիշ-գլուխ,

Իմը ամբողջովին

Որ քո գորովագին սիրո ծովին

Ես տեր լինեմ,

Ինչպես ծովի հին աստվածը՝

Ինքը Պոսեյդոնը.

Որ դու ամբողջովին իմը լինես այնպես,

Ինչպես ես եմ քոնը...¹⁶

Բոլորանվեր սիրո ու հավատարմության իր պահանջով բանաստեղծը բացառիկացնում է անկեղծ զգայմունքը, սրբագործում այն: Մինևույն ժամանակ արտահայտում իր բողոքն ու արելությունը այդ սուրբ զգայմունքը զուտ անձնականից հանուրի քննության հարթությունը տեղափոխողների, անհարի հոգին ժողովներում կոլեկտիվի սեփականությունը դարձնողների դեմ: Նրա էթիկական փիլիսոփայությունը խորապես տրամաբանական է, իսկ ըմբոստությունն էլ բխում է այդ տրամաբանությունից. պոեմը համոզված է, որ բոլոր օրենքները կյանքում ստեղծվում են պաշտպանելու մարդուն, մարդկայինը, և պետք է կարդալ ոչ թե օրենքի տառը, այլ էությունը:

Պետք է սուրբ ընտանիք,

Բայց ոչ ընտանիքի ծաղրանկար,

Պետք է օջախ մաքուր,

Սիրո գողտրիկ տանիք,

Ո՛ր չի կարող լինել ոչ մի կարիք

Խաղալ «լավ ընտանիք»:¹⁷

Եվ Սևակը իր պոեմով ի հեճուկս քաղցենիության և կեղծ օրինապաշտության, հաստատում է, որ մաքուր ու անկեղծ սերը երբեք չի գալիս ոչ ուշ, ոչ ուշացած. ծնվում է ճիշտ ժամանակին՝ իբրև հոգու մեծ ճիչ:

17. Պ.Սևակ, *Երկերի ժող.*, 1973թ., էջ 130:

18. *Նույն տեղում*, էջ 136:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՌՈՄԱՆՏԻԶՄՆԵՐԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՌՈՄԱՆՏԻԶՄԻ
ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Իր ընդհանուր բովանդակությամբ հայկական ռոմանտիզմը արդյունք էր համաշխարհային պատմական տեղաշարժերի, որ տեղի ունեցան Եվրոպայում՝ XIX դ-ի դարասկզբին: Դա ազգերի կազմավորման, ազգային ազատագրական շարժումների ժամանակաշրջանն էր: Ծնունդ առնելով ընդհանուր, «համաշխարհային» ակունքներից, հայկական ռոմանտիզմը յուրովի արծազանգեց իր ազգային կյանքի առաջադրած պահանջներին: Ռոմանտիկական իդեալը հայ իրականության մեջ միանգամից կառչեց հայրենիքի ու ազգության գաղափարին և սրա վրա էլ ձևվեց գլխավոր հերոսը: «Իդեալի երազները եվրոպական ռոմանտիկին հաճախ մղում էին դեպի հեռուները՝ տիեզերական առեղծվածը: Հայ ռոմանտիկը այդ դեգերումը սահմանափակում էր ազգային երազանքի և հայրենասիրական մղումների մեջ»¹: Ռոմանտիկական հերոսը եվրոպայում իր հայրենիքում, հասարակական կարգերի հետ հակասություններից ելք էր որոնում փախուստի մեջ, իսկ հայ ռոմանտիկը ազգային հերոս էր փնտրում և ցույց տալիս հայրենիքի ուղին: Եվրոպական ռոմանտիզմը շատ հաճախ անաղարտ կյանքի, խաղաղավետ անդորրության իդեալն էր փնտրում Արևելքի էկզոտիկ հեռուներում, հայ ռոմանտիկները ձգտում էին դեպի քաղաքակիրթ աշխարհը և այստեղ որոնում իրենց ազգային հերոսներին ու ազատարարներին:

Եվրոպայում սկիզբ առած ռոմանտիզմը տարածվեց շատ այլ երկրներում: Անշուշտ իր վրա կրելով եվրոպական ռոմանտիզմի ազդեցությունը յուրաքանչյուր երկրի ռոմանտիզմ իր գրականության մեջ ներառեց նաև ազգային տարրեր: Հայկականը ևս բացառություն չէր:

Հայ նոր գրականության, ինչպես նաև հայ ռոմանտիզմի հիմնադիր

¹ Ս.Սարինյան «Հայկական ռոմանտիզմ», Եր., 1966, էջ 83.

Արովյանի ստեղծագործության վրա զգացվում է Վալտեր Սկոտի ազդեցությունը: Ինչպես Արովյանի, այնպես էլ Սկոտի ստեղծագործությունը հանդիսացավ ոչ թե նախորդ շրջանից կտավված գրական ավանդույթների շարունակություն, գրելաձևի և սկզբունքների հասարակ հանրագումար, այլ մինչև այդ անհայտ արվեստի և պատմական գիտության նոր զեղարվեստական մի համադրություն, որը համաշխարհային գրականության զարգացման մեջ նոր էջ բացեց: Մերժելով XVIII դ. կլասիցիստների ռացիոնալիզմը, Սկոտը իր պատմավեպերում ստեղծեց զանազան դասակարգերի կյանքի, կենցաղի, բարքերի պատկերը: Սկոտի պատմական վեպերի կառուցվածքի յուրօրինակությունը արտացոլվում է հեղինակի կողմից պատմական պրոցեսի ընթացքի ըմբռնմամբ: Սովորաբար նրա հերոսների ճակատագրերը սերտ կապի մեջ են պատմական այն իրադարձության հետ, որը վեպում գրավում է կենտրոնական տեղը: Հետաքրքիր է, որ հակառակ դեպքերի տրամաբանական ընթացքին ու լուծումներին՝ Սկոտի վեպերի գործող հերոսները իրենց կամքից անկախ ներառվում են իրադրությունների բռն շրջապտույտի մեջ, ըստ որում մտածելու կամ վերլուծելու առիթ կամ ժամանակ էլ չեն ունենում: Հեղինակի կտրուկ միջամտությունները, դեպքերի ընթացքի աննախադեպ փոփոխությունները, հերոսների տրամաբանությամբ չհիմնավորված գործողությունները ստեղծագործությունը դարձնում են էմոցիոնալ, զգացական, իռացիոնալ: Ինչպես տեսնում ենք նույն պատկերն է և «Վերջ Հայաստանի»-ում, որտեղ ևս ամենուր հեղինակի պոռթկուն էմոցիաներն են: Հենց ռոմանտիզմի այսպիսի առանձնահատկությունն է, որ Վ. Սկոտից փոխանցվել է Արովյանին: Սկոտը հաճախ վեպերի գլխավոր հերոս է դարձնում ոչ հարուստ, շիտակ, բարեսիրտ մարդկանց: Շարադրելով հերոսի և նրա սիրած կնոջ կամ հարսնացուի ռոմանտիկ արկածները, Սկոտը հնարավորություն է ստանում հարևանցիորեն գծագրել օտարերկյա զավթիչների, միապետների կամայականությունների դեմ բողոքող հերոսի կամ հերոսների կերպարը:

Այսպիսով գլխավոր հերոսը օժանդակ դեր է կատարում: Գլխավոր հերոսի միջակ ու շարքային լինելը չի ստվերում ժողովրդական առաջնորդների

և պատմական անձանց վառ անհատականությունները, զուգուցեղ բնավորությունները և նրանց նկարագիրը: Վեպում նրանք հանդես են գալիս կարճ ժամանակով, հարկավոր պահին, որպեսզի շարժումների մեջ (որոնց ներկայացուցիչն են իրենք), որոշակի դեր կատարեն և ի դեպ, որոշեն պատմական բախման մեջ ներառված շարքային գործող անձանց ճակատագիրը և լուծեն ստեղծագործության կոնֆլիկտը: Աբովյանը ևս իր վեպի հերոս է դարձնում ոչ հարուստ ընտանիքի զավակ Աղասուն: Սա անշուշտ նորություն էր հայ գրականության մեջ: Ինչպես Վալտեր Սկոտի, այնպես էլ Աբովյանի ռոմանտիզմը և աշխարհայացքը բնորոշեցին նրանց ստեղծագործությունների գեղարվեստական կառուցվածքը: Նրանք մշտապես կառուցում են բարդ, արկածալից սյուժեներ, որտեղ մեծ տեղ են տալիս բազմաթիվ պատահականություններին, որոնք փոփոխում են (բնավորության զարգացման տրամաբանությունը հակառակ) դեպքերի ընթացքը: Նրանց մոտ առկա են ֆանտաստիկական իդեալականացման ենթարկված «բայրոնական» բնավորությունները: Աբովյանը համարյա նույնությամբ կրկնում էր Սկոտի այն միտքը, որ գեղարվեստը պարտավոր է պատմության ճշմարտությունը զուգակցել մտացածնի, երևակայության հետ, որի նպատակն է հրապուրել և հուզել ընթերցողին, ստիպել նրան մասնակից դառնալ գործող անձանց որոնումներին, բաժանել նրանց ուրախություններն ու հույսերը:

Աբովյանը իր առաջաբանում հենց այդ նպատակներն ունի. նա գտնում է, որ ժողովուրդը գրքեր չի կարդում և նա ձգտում է այնպիսի հերոս ընտրել, որը հոգեհարազատ լինի ընթերցողին, այնպիսի լեզվով գրել, որը հեշտությամբ կարդա ընթերցողը:

Վալտեր Սկոտը առաջինը մերժեց XVIII դարի պատկերացումները մարդու մասին և իր ստեղծագործություններում պատկերեց կյանքի ու բնության պատկերներ, անգլիական և եվրոպական տարբեր հասարակությունների վարքն ու բարքը: Դրա հետ մեկտեղ նա առաջ քաշեց այնպիսի հարցեր, որոնք հուզում էին իր ժամանակակիցն: Առաջ քաշեց բարոյականության, քաղաքական և ընդհանրապես արդարության հարցեր,

որոնցով կոչ էր անում ստողծել մի այնպիսի աշխարհ, որում բացակայում էր ճնշումն ու բռնությունը, որում չկային պատերազմներ և տիրում էր արդարություն ու երջանկություն: Բացի սա, առաջինը Վալտեր Սկոտը փորձ արեց պատկերել պատմական անցյալը: Նրա հերոսների ճակատագրերը սովորաբար կապված են պատմական մեծ իրադարձությունների հետ՝ հեղափոխություններ, ցույցեր և այլն, որոնցից էլ սկսվում է հերոսների կյանքի շրջապտույտը: Գիտենք, որ նույնը առկա է և Աբովյանի մոտ: Ընդհարումից սկսվեցին Աղասու թափառումները: Մինչ այդ Աբովյանի հերոսն ապրում էր խաղաղ, հանգիստ, երջանիկ կյանքով, բայց պահը որոշեց ապագան: Անգլիական ռոմանտիկ գրականությունից է գալիս նաև պատանի հերոսների պատկերումը, ընդ որում, ինչպես վերը նշվեց, ոչ հարուստ, բայց ազնիվ, աշխատասեր, գեղեցիկ արտաքինով, սիրված բոլորի կողմից, բարի, արդար և այլն: Այդ հերոսը և նրա սիրած էակը կամ հարսնացուն են կոնֆլիկտի մեխ դառնում: Եվ այնուհետև պատկերվում է նրանց սիրո մեծությունը, հավատարմությունն ու նվիրվածությունը, նրանց բաժանումը, հոգեկան ապրումները, ընդ որում, այդ ամենը կատարվում է հասարակության մեջ, նրանք մնում են այդ հասարակության անդամը և իրենց վրա կրում նրա ազդեցությունը: Սկոտը կերտում է ազգային առաջնորդների տիպեր՝ դուրս եկած ժողովրդի ծոցից, պատմական դեմքեր, որոնք անհրաժեշտ պահին ու ճիշտ ժամանակին ստեղծագործության ընթացքի մեջ բեկումնային դեր են կատարում: Ինչպես Սկոտի, այնպես էլ Աբովյանի մոտ պատահական, չպատճառաբանված լուծումները շատ են: Պատահականությունները փոխում են դեպքերի ընթացքը, փոխվում են անգամ մարդկային բնավորությունները՝ բացասական հերոսները կարող են միանգամից դառնալ դրական և ընդհակառակը, ամեն ինչ իդեալականացվում է, և այս ամենը տեղի չի ունենում տրամաբանական զարգացմանը համապատասխան: Ամենուր հեղինակի անմիջական ազդեցությունն ու միջամտությունն է:

Պետք է նկատել, որ վերոհիշյալ երկու հեղինակներն էլ չափազանց լավ ներկայացնում են կենցաղային կյանքի կոլորիտը և ժամանակաշրջանը: Եվ

հոգեբանության տրամաբանական լուծումը դա է հրազարձ մաս ազդեց

«Մ.Բ.Եսսենում և Դանտե» հոսք բով. Մոսկուայում, Մ., 1949, տպ. 261

ճրանց հաջողվել է կապ ստեղծել անցյալի և ներկայի միջև՝ ցույց տալով դեպքերի զարգացումը: Սկոտի Ռոբ Ռոյի պատմությունը նմանություններ ունի Աբովյանի Աղասու հետ: Երկու դեպքում էլ բողոքը բռնության դեմ է, այն չարագործությունների, որոնք չեն կարողանում հանդուրծել հերոսները:

Աբովյանի «Վերջ Դայաստանին» իր ազդակներն է ստացել նաև Գոգոլի «Տարաս Բուլբա»-ից: Մեծ նմանություն կա այս երկու հայրենասիրական վեպերի մեջ: Երկուսում էլ չգիտակցված հայրենասիրություն է, այն, միայն վերջում, մի քանի էջի ընթացքում է հասունանում և դառնում նպատակային: Աղասին կռվում էր փառաշների դեմ, ոչ նրա համար, որ հայրենիքն էր պաշտպանում, այլ որովհետև հետապնդվում էր նրանց կողմից: Տարաս Բուլբան էլ հայրենիքը պաշտպանելու համար չէր պայքարում իր հայրենիքում ոտնձգություններ կատարողների դեմ: Նրան էլ պարզապես «պատերազմի խաղը» հաճույք էր պատճառում: Դրանով կոզակները ապացուցում էին իրենց ուժը, տղամարդկությունը, բայց խոսք անգամ չկար գիտակցված ու համախմբված, նաև համընդհանուր պայքարի մասին: Թե՛ Գոգոլի, թե՛ Աբովյանի մոտ զգացմունքն է իշխողը, գերակշռողը:

Ինչպես Գոգոլի, այնպես էլ Աբովյանի ստեղծագործություններում ամեն ինչ հիմնված է զգացմունքի վրա: Կա զգացմունք՝ կա կյանք, չկա զգացմունք՝ չկա և կյանք:

Նրանց գրական կերպարները լույս են ճառագում. նրանք ընդմիշտ մնում են ընթերցողի հիշողության մեջ: Դնարավոր չէ մոռանալ Գոգոլի Մալորոսիի մախյան գիշերները, Օքսանայի ուրախ, զնգուն ծիծաղը, Լևկոյի ընկերությունը, որոնք հաճելի են, ասես հավերժ պատանեկություն: «Այս կերպարները միշտ մնացին պոետին սրտամոտ, փոխվեցին Գոգոլի հայացքները ու հերոսները, բայց նա վերընթերցելուց չփոխեց իր առաջին հերոսներին: Դնարավոր չէր նրանց ձևափոխել, նրանք սիրո առաջին համբույրն էին, դատարկված շամպայնի առաջին բուկալի փոփուրն էին, որպես հիշողություն այն հեքիաթային օրերի, որպես հիշողության աստվածային

երիտասարդության»:² Այսպիսին էին և Աբովյանի համար նրա «Վերջ»-ի հերոսները: Նա սրտատրոսի էր ընտրել իր հերոսներին, քնքշությամբ նրանց շունչ տվել, հույսեր կապել նրանց հետ, այդ է պատճառը որ ուղղակի հնարավոր չէր փոփոխել նրանց:

Ժամանակի հետ հայ ռոմանտիզմը հասունացել է, Աբովյանի դյուբակն զգացականությունը փոխարինվել Բաֆֆու տրամաբանականով:

Դյուբոյից ազդակներ ստացած Բաֆֆին արդեն ցանկանում է պատճառափոխանքային կապ ստեղծել, բացատրել, թե ինչու է այս կամ այն հերոսը սիրում կամ բողոքում, ատում կամ փոփոխության եզրեր փնտրում: Ինչպես Դյուբոյի, այնպես էլ Բաֆֆու բացասական հերոսներն իսկ պատճառաբանված են: Նրանք ազատված են հեղինակի անմիջական միջամտությունից: Սրանով է հենց Բաֆֆու ռոմանտիզմը հետաքրքիր:

Նրա հերոսների յուրաքանչյուր շարժումը, միմիկան պատճառաբանված է: Եվ եթե Աբովյանի հերոսները կրքերին ու զգացմունքներին կտրվեին առանց մտածելու, թե ուր են տանում դրանք, ապա Բաֆֆու հերոսների արարքները ավելի մտացածին են, պատճառաբանված, հետևողական:

Եվ եթե Աղասին չունի ձևավորված նպատակներ ու ձգտումներ, նա գործում է այն դեպքերի բերումով, որոնցում հայտնվել է իր իսկ զգացմունքայնության հետևանքով, ապա Կարոն ու Ասլանը արդեն ունեն երազանք, զաղափարներ և ամեն ջանք գործ են դնում այն իրականացնելու համար: Ինչպես Դյուբոյի, այնպես էլ Բաֆֆու մոտ անվերլուծողականությունն ու զգացականությունը իրենց տեղը զիջում են տրամաբանականությանը, ռացիոնալությանը:

Դյուբոյի ռոմանտիզմը տարբերվում է Սկոտի ռոմանտիզմից, ինչպես Բաֆֆունն է տարբերվում Աբովյանից: Դյուբոյի մոտ համարյա չկան պատահականություններ: Ոչ թե դեպքն է որոշում հերոսների ապագան և այս կամ այն անցքը տեղի է ունենում ոչ նրա համար, որ ուղղակի սյուժեն այդպես է դասավորել հեղինակը, այլ որովհետև հերոսների արարքների ու հոգեբանության տրամաբանական լուծումը դա է: Դյուբոյի մոտ արդեն

² «Д.Г.Белинский о Гоголе» под ред. Машинского, М., 1949, стр. 262.

«Էրնանի»-ում զգացվում է պարտքի զգացողության կարևորությունը: Բաֆֆու Սամվելի արարքները ևս պարտքի, հայրենասիրական մղումների արդյունք են:

Յուզոյի ստեղծագործությունը աչքի է ընկնում իր հազվագյուտ ստեղծագործական միասնությամբ: «Կրոնվել»-ի «Առաջաբանում» տրված է նրա ռամանտիկական արվեստի տեսական լայն հիմնավորումը: «Որքան էլ որ հսկա լինեն մայրին և արմավենին, հնարավոր չէ դառնալ մեծ՝ սնվելով միայն նրանց հյութով, - որքան էլ հիասքանչ է անտիկ աշխարհի արվեստը, նոր գրականությունը չի կարող սահմանափակվել նրա ընդօրինակմամբ»³, - այսպիսին է «Առաջաբանի» հիմնական դրույթներից մեկը: Արվեստը, հայտարարում է Յուզոն, փոփոխվում է և զարգանում է մարդկային զարգացմանը զուգընթաց և քանի որ նա արտացոլում է կյանքը, ապա ամեն մի դարաշրջան ունի իր արվեստը: Կյանքը Յուզոյին պատկերվում է աններդաշնակությամբ և հակասություններով լի, որովհետև այստեղ ընթանում է Չարի ու Բարու միջև մշտական պայքար, որը Չարի հաղթահարման և Բարու հաղթանակի մեջ է: «Փարիզի աստվածամոր տաճարը» վեպը յուրովի պատմական էր, զաղափարապես՝ ժամանակակից: Որպես ֆրանսիական պատմության վեպի օրինակ, այն ներառել էր իր մեջ այդ ժանրի նվաճումները՝ տեղային երանգավորումը, գեղապատկերությունը, կենցաղի և բարքերի յուրօրինակությունը, հերոսների ճակատագրի կապը հասարակության պատմական կյանքի հետ: Վեպում ֆրանսիական միջնադարը վերստեղծված է երևակայության գրեթե մոզական ուժով:

Այդպես է և Բաֆֆու պատմավեպերում: Դիմելով անցյալին, հեղինակը հմտությամբ կենդանացնում է այն, վարպետությամբ մատուցում ընթերցողին: Բնապատկերները նախապատրաստում են դեպքերի ընթացքը: Հերոսների ճակատագրերը նա կարողանում է կապել դեպքերի զարգացման հետ:

Յուզոյի նման Բաֆֆին էլ է մեծ ուշադրություն դարձնում հերոսների լեզվի ոճավորմանը, տվյալ պատմական ժամանակաշրջանի երանգավորմանը և վերջինիս հատուկ կերպարների տիպականացմանը: Վերոհիշյալ երկու հեղինակների մոտ էլ հերոսների անհատականացումը սկսվում են նրանց

արտաքինի նկարագրությամբ, երբ հեղինակներն օգտագործելով յուրաքանչյուր հերոսի համար յուրահատուկ համեմատություններ ու մակդիրներ, ստեղծում են նրանց դիմանկարները և ապա դրանց համապատասխան բացահայտում նրանց հոգեկան աշխարհը, որի հետ և կապվում է այդ հերոսների վարքագիծը, բնավորությունը, հոգեբանությունը և հետագա գործողությունները: Ընթերցողի առաջին տպավորությունն ու վերաբերմունքը յուրաքանչյուր հերոսի նկատմամբ ստեղծվում են հեղինակային նկարագրության միջոցով: Վեպում հանդես եկող դրական կերպարները նկարագրելիս Յուզոն և Բաֆֆին օգտագործում են այնպիսի բառեր, մակդիրներ ու համեմատություններ, որոնք այդ հերոսին սիրելի ու համակրելի են դարձնում և հակառակ է տեղի ունենում բացասական հերոսների համար: Հերոսների նկարագրության ժամանակ ներկայացվում է նրանց շրջապատը, ինչպես և այդ ժամանակաշրջանին և տվյալ հերոսի դիրքին հատուկ տարազն ու արդուզարդը:

«Փարիզի աստվածամոր տաճար»-ում մենք տեսնում ենք թագավորի ապարանք Բաստիլը, Գոնդելյոյե ազնվական տունը և միևնույն ժամանակ փարիզյան հրապարակները, «հրաշքների բակի» ետնախորշերը, որտեղ բնակվում են թշվառները: Յուզոյից ավելի լավ ո՞վ կարող էր պատկերել XV դ-ի վերջի Փարիզի անհամար եկեղեցիները՝ սրածողերով ու բուրգիկներով, թագավորական մռայլ ամրոցները, նեղիկ փողոցները, լայնարձակ հրապարակները: Եվ այս ֆոնի վրա միջնադարյան քաղաքի մարդկանց գուներ կերպարներ, սենյորներ, վաճառականներ, սրածայր գլխարկներով ազնվական կանայք, քաղաքային պճնված բնակչուհիներ, փայլուն զրահներով թագավորական ռազմիկներ, կեղծ ու իրական խեղությամբ թափառաշրջիկներ և մուրացկաններ:

Իր արտասովորությամբ ու գեղատեսիլությամբ ռոմանտիկների համար այնքան գրավիչ այս ամբողջ աշխարհը Յուզոյի վեպերում հանդես է գալիս «լուսավորված թատերական լուսարձակներով, գուեմազարդված փարթամ դեկորների տեսքով»⁴:

³ "Литературные манифесты западноевропейских романтиков". М., 1980, с.447-459

⁴ Н.А. Соловьев "История зарубежной литературы XIX в." М., 1991, стр. 285.

Նկատենք, որ ոչ մի նկարագրություն Չյուզոյի մոտ պատահական չէ, ոչ մի բնապատկեր անգամ, ի միջի այլոց չի գրված: Ամեն ինչ արվում է հերոսներին ու նրանց գործողությունները պատճառահետևանքային դարձնելու համար: Դաժան և հաշվենկատ Լյուդովիկոս XI հիշեցնում է թագակիր ոճրագործներին: Մռայլ, մոլեռանդ աբբա Կլոդ Ֆրոլոյի կերպարը տրված է նրա զգացմունքների ողջ այլակերպվածությամբ: Նրա սերը, հայրական հակումները, գիտության ծարավը փոխարինված են եսասիրության ու ատելության: Կյանքից մեկուսացած, տաճարի ու փորձասենյակի պատերի մեջ պարփակված նրա հոգին գտնվում է մութ ու չար կրքերի իշխանության ներքո: Առերևույթ պերճ, սակայն իրականում անգութ հասարակությունը մարմնավորված է սպա Ֆեր դե Շատոպերի կերպարում, որը, ինչպես և աբբան, ընդունակ չէ անշահախնդիր ու անձնագոհ զգացմունքների: Եվ հակադրված նրանց, փողոցային պարուհի Էսմերալդան խորհրդանշում է մարդու բարոյական զեղեցկությունը, ճակատագրի դաժան խաղը՝ խուլ և այլանդակ Զվազիմոդոն: Չյուզոն այդքան մեծ ուշադրություն է դարձնում իր հերոսների նկարագրությանը, որովհետև գիտի, որ վերջիններս են կենդանացնելու իր ստեղծագործությունը, գիտի, որ վերջիններս բնական ու կյանքով հագեցած գործողություններն են գրավելու ընթերցողին: Իսկ գործողությունները հիմնականում կատարվում են Փարիզի աստվածամոր տաճարում, կառուցված հարյուրավոր անհայտ վարպետների կողմից, որի նկարագրության վրա պակաս ուշադրություն չի դարձնում հեղինակը: Պատահական չէ, որ տաճարի խավարներում, նրա կամայների ներքո, ծուլված մտահնար Քիմեռների ու զանգերի ձայների ղողանջին, միայնության մեջ ապրում է Զվազիմոդոն՝ «տաճարի ոգին», որի գրոտեսկային կերպարում անձնավորված է միջնադարը: Այդ «համարյա մարդու» էությունը վերածեն է սերը և նա ընդունակ գտնվեց ոչ միայն հասկանալ Էսմերալդայի և Կլոդ Ֆրոլոյի կոնֆլիկտը և արդարադատության ճանկերից խլել չքնաղ պարուհուն, այլ նաև սպանել Ֆրոլոյին, որը հետևում էր իրենց, չնայած նա վերջինիս որդեգիրն է:

Վեպում հանդիպում ենք ճարտասանական տերմիններ, մեջբերումներ լատիներենից, իսպաներենից, իտալերենից: Այսինքն հեղինակը փորձում է

յուրաքանչյուր հերոսի խոսեցնել իր լեզվով: Չյուզոն առատորեն օգտագործում համեմատություններ, մակդիրներ, փոխաբերություններ, անտիթեզեր: Այս ամենը հատուկ է և Բաֆֆուն: Գերոսների լեզվի ոճավորման հարցում ստեղծագործական մեծ վարպետություն է պահանջվում, հատկապես պատմական թեմայով ստեղծագործող հերոսներից: Բաֆֆուն հաջողվել է վերարտադրել տվյալ պատմական ժամանակաշրջանին հատուկ հասարակական – քաղաքական պայմաններ և համապատասխան լեզվական միջոցներով բացահայտել այդ միջավայրում հանդես եկող հերոսների, կենցաղի, զաղափարախոսության ու մտածելակերպի յուրահատկությունները: Օր. Սամվելին հատուկ է իշխանավայել տարազը, ինչպես ասենք ասրյա նուրբ վերարկուն, մետաքսյա ծաղկավոր պատմուճանը՝ թեքերի ոսկյա կոճակներով կամ ծանր ականակառ ոսկյա քամարը: Սուրհանդակը իր աստիճանին ու դիրքին համապատասխան հագուստ ունի «մի կարճ մուշտակ, մեջքը պնդած կաշյա լայն գոտիկով, որ պնդել էր կրծքի մի մասը՝ մինչև փոքի ստորին մասերը»⁵ և այլն: Կողմ դր ցամառայա ի րվմ իլ ժամրմայի նուսմի դի թզ անն Բաֆֆու պատմավեպերն ընթերցելիս առաջին հայացքից թվում է, թե բոլոր հերոսները խոսում են միևնույն լեզվով և դժվար է նրանց միմյանցից տարբերելը, բայց բոլորովին պարտադիր չէ, որ վեպում հանդես եկող հոգևորականները խոսեն գրաբարով, պարսիկները՝ պարսկերեն բառերով ու արտահայտություններով, իսկ ստորին խավի ներկայացուցիչները՝ իրենց բարբառներով: Անշուշտ բոլորը խոսում են գրական հայերենով, ուղղակի պահպանված է ոճավորումը:

Բաֆֆու ստեղծագործությունների թե՛ կոլորիտը, թե՛ հերոսների արտաքինը, անգամ նրանց դատողություններն ու խոսքը քայլ առ քայլ ստեղծում են հանգույցը ու նախապատրաստում հանգուցալուծումը: Գեղինակը այնքան մեծ փութաջանությամբ է կերտում իր հերոսներին, որ ընթերցողի համար, ստեղծագործության մեջ, բացակայում է հեղինակը: Եթե նրան պետք է գործողություններից դուրս ինչ-որ տեսարաններ ցույց տալ, նա դիմում է ճանապարհորդությանը: Եվ առանց իր կամքը թելադրելու իր հերոսին, նրան

⁵ Բաֆֆի «Մամվեր», Եր., 1956, էջ 26.

ՊԵՏԵՐ ՀԱՆԴԿԵԻ ԴՐԱՄԱՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ավստրիացի ժամանակակից հայտնի գրող Պետեր Հանդկեն (ծնվ. 1942թ.) արևմտաեվրոպական մշակութային ասպարեզ մտավ 60-ական թվականների կեսերին և իսկույն գրավեց գրական աշխարհի ուշադրությունը: Մեծ աղմուկ առաջացրեց նրա հայտնի ծրագրային ելույթը 1966թ. Պրիստոն քաղաքում (ԱՄՆ), ուր նա մասնակցում էր որպես «խումբ-47» գրական ընկերության համաժողովի պատվիրակ: Դա գերմանալեզու գրողների ամենահեղինակավոր միավորումն է: Հանդկեն հայտարարեց այդ համաժողովին, որ ժամանակակից Ավստրիայի և Արևմտյան Գերմանիայի գրականությունը «սոսկ նկարագրական է» և առաջ քաշեց իր պատկերացումը արդի գրականության առջև ծառայած խնդիրների վերաբերյալ: Ժամանակակից աշխարհում անհատի գոյության իր հայեցակարգը Պետեր Հանդկեն հակադրեց դարամիջում ստեղծված գեղարվեստական գործերին տրվող չափանիշներին: Նա մեղադրեց ավագ սերնդի գրողներին գեղարվեստական անկարողության մեջ: Սկզբնական շրջանում գրեթե բոլոր քննադատներն ունեին այն կարծիքը, որ «նորելուկ» այդ գրողը պարզապես սենսացիաների և սկանդալային փառքի սիրահար է: Քսանչորսամյա Հանդկեն մինչ այդ հասցրել էր ստեղծել դեռ միայն մեկ վեպ և ավստրիական ու արևմտագերմանական գրական ամսագրերում գրել մի քանի աղմկահարույց հոդվածներ: Սակայն Պրիստոնի հայտնի համաժողովից հետո Հանդկեն թողնում է անավարտ իրավագիտության ուսումնառությունը ավստրիական Գրաց քաղաքի համալսարանում (որը գրեթե ավարտել էր) և ամբողջովին նվիրվում գրական գործունեությանը: Եվ առաջին իսկ պիեսները, որոնք նա գրում է հենց 1966 թվականից սկսած, հերքում են գրաքննադատների թյուր կարծիքը և մեծ համբավ բերում սկսնակ գրողին:

Հանդկեի ստեղծագործական գործունեության սկիզբը կապված է 1960թ. Գրաց քաղաքում ստեղծված գրողների և արվեստագետների «Ֆորում

Շտադլարկ» միավորման հետ: Այդ միավորումը չուներ միասնական գաղափարական և գեղարվեստական ծրագիր, այլ առավել հայտնի էր իր համարձակ փորձարարական ուղղվածությամբ: Սկսնակ ստեղծագործողների համար դա թերևս ինքնահաստատման միակ հնարավորությունն էր, որը նախանշում էր նրանց ստեղծագործական ուղին և օգնում ձեռք բերել անհատական ոճ: Միավորումն ուներ իր ամսագիրը, որը կոչվում էր «Մանուսկրիպտներ» ("Manuskripte"): 1967 թվականին այդ ամսագրի շուրջը հավաքված մի խումբ երիտասարդ գրողներ՝ Գ. Ֆալքը, Վ. Բաուերը, Ա. Զոլերիչը, Բ. Ֆրիշմուլը, Կ. Դոֆերը և Պ. Հանդկեն ստացան «Գրացի խումբ» անվանումը: Այդ խումբը փաստորեն եղավ «Վիեննայի խմբի» (1954-1967թթ.) իրավահաջորդը: Վերջինիս կազմի մեջ մտնող գրողները՝ Դ. Արտմանը, Ֆ. Ախթալաթները, Կ. Բաուերը, Օ. Վինները, Գ. Բյուլը, նույնպես աչքի էին ընկել դրամատուրգիայի և հատկապես պոեզիայի բնագավառում իրենց փորձարարությամբ: Երկու խմբերի գրողներին ամենից շատ միավորում էր մեծ հետաքրքրությունը լեզվի և լեզվական հնարավորությունների նկատմամբ: Այս հարցում նրանք բոլորը հենվում էին ավստրիացի հանրաճանաչ փիլիսոփա Լյուդվիգ Վիթգենշտայնի լեզվաբանական տեսության վրա: Ելնելով Վիթգենշտայնի այդ տեսությունից և հիմնվելով իրենց սեփական ստեղծագործական որոնումների արդյունքների վրա՝ վերոհիշյալ գրողները եկան այն միասնական համոզմունքին, որ գրական լեզուն անհրաժեշտ է պարզեցնել, «մասնատել» պարզագույն բաղադրիչների:՝ Նոր սերնդի գրողներին առաջին հերթին հետաքրքրում էր լեզվի ազդեցությունը մարդկային գիտակցության ձևավորման վրա: Պետեր Հանդկեն առանձնապես քննադատաբար էր մոտենում այն փաստին, որ լեզուն այսօր դարձել է մի միջոց, որի շնորհիվ կարելի է մանիպուլյացիա կատարել մարդու գիտակցության հետ: Այդ թեման, որ առաջին անգամ իր հստակ արտահայտությունը գտավ «Կասպար» պիեսում (1968թ.), հետագայում դարձավ գլխավորներից մեկը Հանդկեի ստեղծագործության մեջ ընդհանրապես: Այս պիեսում դա ներկայացված է Կասպարի «Քատերական

¹Ruhm G. Zwei Arten von Phantasie; Frankfurt, a. M., 1982, -S.41

Ֆիգուրայի» օրինակի վրա: Սա իր մեջ ընդգրկել է ավստրիական ժողովրդական թատրոնի հերոս Կասպեռլի ավանդական հատկանիշները: Կասպարին խոսքով «վարժեցնելու» գործընթացը ներկայացված է մեծ վարպետությամբ և գաղափարապես շատ մոտ է Վիթգենշտայնի տեսությանը:

Քննադատների համար այս ամենը հիմք հանդիսացավ հայտարարելու, որ Պետեր Չանդկեն իր գեղարվեստական գործունեության մեջ պրակտիկ կերպով ներկայացնում է Վիթգենշտայնի լեզվաբանական տեսության որոշակի դրույթները: Այլ կերպ ասած՝ ավստրիացի փիլիսոփայի տեսությունը մեխանիկորեն անց է կացվում գրական ստեղծագործություն: Սակայն լավագույն պատասխանը այդ գործընթացի թյուր ըմբռմանը տալիս է հենց ինքը Պետեր Չանդկեն անվանի գերմանացի գրաքննադատ Վ. Չագեին տված իր հարցազրույցում. «Վիթգենշտայնը ազդել է ինձ վրա այն առումով, որ ես գրելու ընթացքում երբեք չեմ փորձել գտնել *սեփական* լեզու, չեմ փորձել «ստեղծել» օրիգինալ լեզու: Սակայն Վիթգենշտայնը չի ազդել ինձ վրա փիլիսոփայական առումով... Նա միայն հիմք է տալիս իմ գեղարվեստական մեթոդի համար»:²

Չանդկեի ամբողջ վաղ ստեղծագործական շրջանը անցել է յուր մեթոդի և ոճական ձևերի որոնումների նշանի տակ: Եվ հենց դրանով է պայմանավորված հեղինակի այդ շրջանում գրված ստեղծագործությունների փորձարարական բնույթը: Չի կարելի հաշվի չառնել նաև այն փաստը, որ Չանդկեն մեծ գրական ասպարեզ մտավ 60-ական թվականների կեսին, այսինքն՝ այն ժամանակ, երբ մշակութային կյանքը Ավստրիայում և Արևմտյան Գերմանիայում ձևավորվում էր զանգվածային ժողովրդավարական շարժման ընդհանուր մթնոլորտում: Այդ ժամանակ զգալի ուժեղ էին ռադիկալ տրամադրված երիտասարդության և մտավորականության «ծախ» հայացքները: Նոր «ըմբոստ սերունդը» չէր ընդունում «պոստինդուստրիալ» հասարակության քաղաքական, սոցիալական և բարոյական հիմքերը: Եվ շատ բնական է, որ այդ համատեքստում Չանդկեի քննադատական

²Hage V. Die Wiederkehr des Erzählers Frankfurt a. M., 1982, S.117.

դատողությունները, որոնք շատ հեռու էին ակադեմիականից և ինչ-որ տեղ անգամ ուղղված էին դրա դեմ, ինչպես նաև գրողի ընդհանուր կեցվածքը նրան էլ տվեցին «ծախ ռադիկալ» համբավ: Սակայն հեղինակը միշտ շատ զգուշանում էր գրականության քաղաքականացումից:

Չանդկեի ողջ ստեղծագործությունը և հատկապես նրա պիեսները կրում են ոչ ավանդական, ընդգծված նորարարական բնույթ: Դրամատուրգիայի բնագավառում Պետեր Չանդկեն հայտնի է որպես «խոսակցական պիեսների» հեղինակ: Դրամայի էպիկանացումը, բեմական պատրանքի վերացումը՝ այս ամենը 60-ականների արևմտաեվրոպական դրամայի բնորոշ գծերից էին: «Պիեսներ առանց կերպարների» (Schauspiele ohne Bilder), այսպես է բնորոշում «խոսակցական պիեսները» ինքը հեղինակը:³ Այս պիեսներում չկան ոչ միայն գործող անձիք, այլև չկան կոնֆլիկտ, բեմական գործողություն, բեմիներ, դեկորացիա: Այլ կերպ ասած՝ նրանք ամբողջովին գերծ են մեր ավանդական պատկերացրած թատրոնի ձևի և բովանդակության տարրից: Չեղինակը համարում է, որ այդ ամենը ավելորդ է և խանգարում է դերասանների և հանդիսատեսի անմիջական շփմանը: Դրամատուրգ Չանդկեն այս դեպքում ձգտում է առավելագույն չափով մոտեցնել արվեստը իրականությանը, ինչը շատ հատկանշական էր այդ ժամանակաշրջանի դրամատուրգների ստեղծագործական որոնումների համար:

«Չանդիսատեսին պախարակումը»՝ Չանդկեի ամենահայտնի «խոսակցական պիեսներից» է: Այն մեծ աղմուկ բարձրացրեց իր շուրջը և սուր վիճաբանության առարկա դարձավ ոչ միայն գերմանալեզու գրական միջավայրում, այլև ամբողջ Արևմտյան Եվրոպայի դրամատուրգների շրջանում: Ավստրիացի հեղինակի այս պիեսում բեմ են բարձրանում չորս դերասան և սկսում են խոսել՝ դիմելով անմիջականորեն հանդիսատեսին: Այդ «խոսակցության» հիմնական առարկան «թատերական մեխանիզմի կործանումն է»: Եթե գերմանացի ռոմանտիկ գրողները այդ ոճաձևին էին դիմում միայն որպես մի «հանկարծակի» դրվագ, որպեսզի հանդիսատեսը երկար

³ Handke P. Bemerkungen Zu meinen Sprechstücken, In: Publikumbeschimpfung und andere Sprechstücke. Stuttgart, 1968, -S.95

չմնար պատրանքի մեջ և որոշ մասնակցություն ունենար բեմական գործողությանը, ապա Հանդկեի մոտ դա դեկլարատիվ հայտարարվում է հենց պիեսի սկզբում, և այդ սկզբունքը պահպանվում է մինչև պիեսի ավարտը: Ռուս գրականագետ և քննադատ Ն. Պավլովան Հանդկեի պիեսների մասին գրում է. «Թատրոնի փոխարեն հեղինակն ուզում է հանդիսատեսին ներկայացնել ամենաիրական իրականությունը... Երիտասարդ Հանդկեի պիեսները մի բատրոն են, որոնք վերածում են կյանքը պարզագույն հասկացությունների, պսակազերծում ֆորմալ կյանքը»:⁴

Ավանդական բեմական խոսքը, որը կառուցված է երկխոսությունների և մենախոսությունների ձևով, Հանդկեն փոխարինում է ոչ ավանդականով, որը հայտնի է դեռ անտիկ շրջանից: Սակայն հանդիսատեսին անմիջականորեն դիմելը անտիկ թատրոնում ուներ բոլորովին այլ նպատակ. կապ պահպանել հանդիսատեսների հետ, իմանալ վերջիններիս կարծիքը և հաշվի առնել այն: Մինչդեռ Հանդկեի «խոսակցական պիեսներում» սա ոչ թե մի ոճածև է, որը կոչված էր ակտիվացնելու հանդիսատեսի ուշադրությունը, այլ ավելի շուտ բեմական «գործողության» և բեմական խոսքի միակ ձև: Դերասանները հենց պիեսի սկզբից խոստովանում են. «Մենք ոչինչ չենք ցուցադրում: Ոչինչ չենք բեմականացնում: Ոչ մի փաստ: Ոչ մի դեպք վերցված կյանքից: Մենք միայն խոսում ենք: Մենք խաղում ենք՝ ձեզ հետ խոսելով»⁵: Հեղինակի համար հիմնական խնդիրներից մեկը «օտարացումն է», ինչը շատ բնորոշ էր Սարոյանի և Բրեխտի դրամաներին: Օտարացման ոճածևը պետք է «ցնցեր» հանդիսատեսին, ստիպեր նրան նայել իր վրա որպես մի խորթ, օտար եակի: Պիեսը առաջին անգամ բեմադրվեց Մայնի Ֆրանկֆուրտի թատրոնում, 1966թ. հունիսին, հայտնի ռեժիսոր Կլաու Փեյմանի կողմից: Այն հենց սկզբից արժանացավ ամենահակասական գնահատականների: Սակայն հեղինակը

⁴ Павлова Н. С., Предисловие к кн.: Молодые авторы ФРГ, Австрия и Швейцария, М. 1982, с. 10

⁵ Handke P. Stücke I. Frankfurt a. M., 1977, S.203

հավատարիմ մնաց ժանրին, և այդ ժամանակաշրջանից սկսված «խոսակցական պիես» (Sprechstück) տերմինը իր հաստատուն տեղը գտավ քննադատների և գրականագետների բառապաշարում:

Հանդկեի ավելի ուշ գրված պիեսների «Կանխագուշակում», «Ինքնամերկացում», «Օգնության ճիչը», «Չիով Բողենյան լճի վրայով» և «Կասպարը», թեև պահպանել են «խոսակցական պիեսի» սկզբունքը, արդեն որոշ չափով «օգտվում են» ավանդական պիեսների տարրերից: Ամենը հերքող, ժխտող, դեստրուկտիվ այդ ոճածևը որոշ չափով իր վրա է կրում Բեկետի և Իոնեսկոյի դրամատուրգիայի ազդեցությունը:

«Չիով Բողենյան լճի վրայով» (1971թ) պիեսի անունը կապված է գերմանացի ռոմանտիկ գրող Գ. Շվաբի «Հեծյալը և Բողենյան լիճը» բալլադի հետ: Բալլադի հերոսը ընդունում է բարակ սառույցով և ծյունով ծածկած լիճը որպես ծյունածածկ հարթավայր և ձիով անցնում վրայով: Հասնելով մյուս ափ և այնտեղ իմանալով ինչ վտանգի էր ենթարկել ինքն իրեն՝ արսափից մահանում է:

Հանդկեի պիեսի գործող անձանց հաջողվում է խուսափել նման տխուր ճակատագրից և պահպանել իրենց անվրդով գոյությունը: Սակայն դա բնական հանգստություն և անվրդովություն չէ: Գործող անձիք ներքին մեծ ճիգերի շնորհիվ ստեղծում են այն պատրանքը, որ իրենց ոտքերի տակ ոչ թե սառույցի շերտ է, այլ իրոք ձնածածկ մի հարթավայր, այսինքն՝ վստահելի հեմարան, «ամուր հող»: Ըստ Հանդկեի հերոսների, ավելի անվտանգ է թողնել ամենը այնպես, ինչպես կա: Սա է Հանդկեի կողմից ատած կոնֆորմիզմի հիմնական սկզբունքը, որը հաստատում է պասիվությունը որպես վարվելաձևի և մտածելակերպի նորմ: «Կարգ ու կանոնի» պահպանումը օգնում է դիմակայել քաոսին: Սակայն դրա համար անհրաժեշտ է ճանաչել սահմանված կարգը «անսասան»՝ գիտակցաբար կամ բնազդաբար չնկատելով դրա ետևում (սառցե շերտի տակի պղտոր և մութ ջրում)՝ թաքնված անկանոնությունը: Իսկ դա իր հերթին՝ ենթադրում է հրաժարվել մտածելու և գործելու ազատությունից և վերջին հաշվով՝ յուր անհատականությունից:

Պիեսի գործող անձիք խամաճիկներ են, որոնք կրում են հայտնի դերասանների անուններ, սակայն զուրկ են անհատականությունից: Նրանք դրված են պայմանական վիճակի մեջ և ամբողջովին մեկուսացված են շրջապատող իրականությունից:

«Կասպար» պիեսի գլխավոր գործող անձը՝ Կասպար Յաուզերը՝ կես-կենդանի, կես-մարդ է: Այս կերպարը նույնպես վերցված է XIX դարից, սակայն ոչ թե գրականությունից այլ իրական մի դեպքից, որը տեղի էր ունեցել դարասկզբին: Կասպար Յաուզեր անունով մի երիտասարդ երկար տարիներ ինչ-ինչ պատճառներով անց է կացրել մի մենախցում: Եվ երբ նա տարիներ անց դուրս է եկել «լույս աշխարհ», արդեն անկարող էր ոչ միայն մարդկային լեզվով խոսել, այլև ընկալել այն ամենը ինչ կատարվում էր շուրջ բոլորը: Յանդկեի պիեսում այդ հերոսը ստիպված նորից սկսում է սովորել խոսել: Եվ հենց այդ գործընթացն է ընկած այս «խոսակցական պիեսի» հիմքում: Յեղիակը պարզորոշ ցույց է տալիս, որ թեև լեզուն հիմնականում ունի կառուցողական դեր, սակայն ինչ-որ պահից սկսած՝ նա արդեն կատարում է ապակառուցողական ֆունկցիա:

Լեզվական դարձվածների յուրացումը Կասպարի համար ընդհանում է շրջապատող իրողության և հասարակության նորմերի յուրացմանը գուզընթաց: Գոյություն ունեցող լեզվական և մտածելակերպի շտամպերը, ըստ Յանդկեի, զրկում են անհատին ինքնուրույն դատելու և վարվելու ազատությունից: Պատրաստի կաղապարներով ապրող մարդը ի վերջո կորցնում է իր դեմքը, իր «ես»-ը: Նա դառնում է կենդանական բնազդներով մեխանիկորեն գոյատևող մի էակ: Փաստորեն, իր պիեսներով Պետեր Յանդկեն փորձում է «շարժել» հանդիսատեսին, սթափեցնել նրան, «արթնացնել խոր քնից և ստիպել նրան նայել շուրջ բոլորը մեկ այլ նոր հայացքով»:⁵

Յեղիակը տալիս է իր պատկերացումը «մաքուր դրամայի» մասին, որը պետք է զերծ լինի «ձեռնածությունից ու ծամածությունից»: Յանդկեն

ասում է. «Մարդը խոսում է բեմից դիմելով հանդիսատեսին լուրջ և կրքոտ»:⁷ Յանդկեի «խոսակցական պիեսների» մեկ այլ յուրահատկությունն այն է, որ հեղինակը հակադրում է այդ ժամանակաշրջանի դասական դրամատուրգիային իր «խոսքի թատրոնը»: Դրա հիմքերը որոշ չափով քաջնված են նաև հեղինակի «ավստրիական արձատներին» և ավստրիական ժողովրդական թատրոնի որոշակի ավանդույթների մեջ: Որոշ քննադատներ, հաշվի առնելով, որ հեղինակի հայրը գերմանական ծագում ունի, փորձում են Յանդկեն ներկայացնել որպես գերմանացի գրող: Սակայն Պետեր Յանդկեն թե՛ իր արձատներով, թե՛ իր ծնունդով և թե՛ իր մտածելակերպով տիպիկ ավստրիական գրող է: Նա ծնվել է Կարինթիայում «ամենավստրիական գավառում»: Ծնունդով այստեղից էին նաև նշանավոր արձակագիր Ռոբերտ Մուզիլը և Յանդկեի ժամանակակից Ինգեբորգ Բախմանը: Յանդկեն իր ստեղծագործության մեջ շատ հաճախ է դիմում ավստրիական պատմամշակութային ավանդույթներին, և այդ «սնուցիչ միջավայրի» ազդեցությունը գնալով ավելի է զգացվում:

Պետեր Յանդկեի ամբողջ ստեղծագործության մեջ արտացոլում են գտել անհատի գոյության կարևորագույն խնդիրները ժամանակակից աշխարհում: Սակայն նա կապակցում է դա դարաշրջանի կոնկրետ սոցիալ-պատմական և մշակութային համատեքստի, ազգային գրական ավանդույթների հետ: Գրողի առաքելության խնդիրը ժամանակակից հասարակության մեջ Յանդկեի համար անչափ կարևոր է: Ստորելով գրականության դերի և խնդիրների մասին հեղինակը արտահայտում է այն միտքը, որ դա «հոգևոր զարգացման և իրականության ընկալման ու յուրացման միջոց է»:⁸ Յանդկեն խոստովանում է, որ նա իր համար դիտարկում է գրականությունը, որպես յուրօրինակ «ապրելակերպ» (Lebenshaltung):⁹ Յանդկեի մոտ «հերքումը», «ժխտումը» չի կրում համընդհանուր բնույթ, դա ավելի շուտ նորի պահանջի յուրատեսակ

⁷ Schluter J. An Interview with P. Handke, Pittsburgh, in: The plays and novels of P. Handke 1981, p. 168

⁸ Schluter J. An Interview..., p.154

⁹ Schluter J. An Interview..., p.158

⁵ Брук П. Пустое пространство, М. 1976, с. 101

արտահայտություն է: Դրանով իսկ այն ունի կառուցողական բնույթ և ոչ մի կապ չունի 60-ական թվականների վերջերին Արևմտյան Եվրոպայում տարածում գտած «գրականության մահվան» գաղափարի հետ: Յանդկեի բոլոր փորձարարությունները գրական ոլորտում և հատկապես տիպաբանական մեկ հարթության վրա գտնվող «խոսակցական պիեսների» ժանրում փորձ էր գտնելու նոր, սեփական ուղին, նոր գեղարվեստական միջոցներ ժամանակակից մարդուն հուզող խնդիրները արտացոլելու համար: Այդ պիեսները վկայում են նաև հեղինակի աշխարհայացքի և աշխարհընկալման կայացման բարդ և հաճախ հակասական գործընթացի մասին: Յանդկեի ստեղծագործությունը ամբողջովին չի «տեղավորվում» նեոավանգարդիստական գրականության շրջանակների մեջ, քանզի ռեալիստական տարրը զարգանում է նրա գրական որդուններին զուգընթաց: Այդ մասին են վկայում 80-90-ական թվականներին նրա գրած արձակ գործերը: Մի բանում է հեղինակը համոզված, որ գրողի ստեղծագործական մտածողությունը պետք է գերծ լինի ստերեոտիպերից և դրանով իսկ ուղղված լինի դեպի ապագան:

НЕЛЛИ АПОЯН

СКАЗОВАЯ ФОРМА ПОВЕСТВОВАНИЯ КАК
СТИЛЕВАЯ ДОМИНАНТА ПРОИЗВЕДЕНИЙ
А. АЙВАЗЯНА.

А. Айвазян — один из самобытных армянских прозаиков. Его произведения достигают определённой эпичности благодаря многозначности и ёмкости описываемых событий. Эпическая основа характера раскрывается не только посредством включения его в социально-значимый конфликт, но и преобразованного видения расширенной социальной предыстории. Фактически, полнота бытия в произведениях А. Айвазяна возникает не за счёт создания писателем развёрнутой картины действительности, а вследствие воплощения в духовном мире героя реальности жизни. Необходима правильная постановка вопроса, а не его решение в художественном произведении — такова модель айвазяновского мира. В современную жизнь вмешиваются фатальные силы, опровергающие плоскую альтернативу добра и зла, а также рационалистическое понятие индивидуальной вины. И вмешательство это трагично в той мере, в какой трагично столкновение доисторической моральной категории общего «рода» с индивидуальной судьбой живого человека.

В структуре повествования произведений чаще всего обнаруживается субъективная призма одного персонажа — героя произведения, воспринимающего и оценивающего события; камертоном ему служит субъективный план автора, особое

авторское повествование, что является характерной особенностью стиля А. Айвазяна.

По внешнему признаку - объёму - "Помощь сатаны" относится к рассказу. Но он поднимается до философского осмысления жизни человека. Исследование узлового конфликта бытия /Добро - Зло/, умение всеобъемлюще сконцентрироваться в образе, характере, приводит к тому, что небольшой по объёму рассказ получает глубокое осмысление. Эта художественная система представляет собой многосторонний комплекс художественных приёмов, раскрытие характеров и психологических состояний, в котором монологичная и диалогичная речь занимают одно из ведущих мест. В рассказе бросается в глаза исключительное стилевое мастерство А. Айвазяна, который искусно komponует различные формы повествования: монологическая речь оказывается не растворённой в авторском повествовании, а, напротив, многообразными нитями связанной и переплетающейся как с авторской, так и несобственно-прямой речью. Автор зримо и незримо включается в каждую реплику персонажа, либо комментируя её, либо подчиняя её своим индивидуальным принципам построения произведения.

В произведении "Помощь сатаны" доминирующие элементы в авторской речи связаны с изображением субъективного плана рассказчика-повествователя /здесь не принимаются во внимание различия между образом повествователя, который, по нашему предположению, сближен с образом автора и образом повествователя, являющимся своеобразной маской по отношению к образу автора в

стилизации сказа/. Эти различия в данном случае несущественны, поскольку образ повествователя рассматривается как постулируемый организующий центр авторской речи. Но нередко произведение строится таким образом, что доминирующие элементы повествовательной нормы связаны с изображением субъективного плана персонажа в формах авторской речи. Происходит это тогда, когда всё повествование ведётся с точки зрения одного персонажа: передаётся то, что он видит, чувствует, о чём размышляет, постоянно передаётся его оценка, но сам персонаж никогда не становится объектом оценки со стороны повествователя или других персонажей. Главный герой выступает в роли посредника в передаче авторской точки зрения.

А. Айвазян насыщает произведение определённый эмоциональный тон, читателя неизбежно охватывает совершенно определённое настроение, которое как будто даже и не принадлежит исключительному персонажу, а разлито в тексте, пропитывает его. Психологизм имеет самое непосредственное отношение к стилю произведения, всего творчества писателя. Психологизм выступает как организующий стилевой принцип, стилевая доминанта, то есть главное эстетическое свойство, решающим образом определяющее художественное своеобразие рассказа. Система элементов его стиля организована таким образом, что стимулирует читательскую активность, намечая лишь основные контуры психологического состояния, а в остальном вполне полагаясь на читателя. Отметим значительную роль, которую играет психологическое повествование от третьего лица: оно обладает

рядом преимуществ в изображении внутреннего мира. Внимание сосредоточено на сердцевине переживания, а не на нюансах и подробностях движений; психологическое состояние схвачено разом, мгновенно, полной деталью. В этом одна из главных особенностей айвазяновского психологизма /как, впрочем, и поэтики в целом/. Психологическое повествование необычайно концентрировано, сжато, избегает развёрнутого описания внутреннего мира.

Существенной стороной художественной системы данного произведения являются также стиливые приёмы, позволяющие читателю стать свидетелем внутренней, психологической деятельности персонажа. Весь текст превращён в одну мысль напряжённого нравственного поиска: в сюжете — героя, в организации творческого процесса — автора. Авторское сопровождение реплик героя замыкает повествование во внутреннем мире. Подобный контакт между читателем и персонажем установим автором приёмом контаминации. А. Айвазян сосредоточивает внимание на внутреннем /психологическом/ состоянии героя. Его эмоциональное состояние изображается на фоне нарочито беспристрастного авторского повествования. Такова в целом стиливая доминанта произведений А. Айвазяна.

ՏՐՈՂՎԱԾ ԲԱՑԱՂԱՅՏՉԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՂԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶԿՈՒՄ

Բացահայտիչը, որպես նախադասության ինքնուրույն անդամ, նրա արտահայտման ձևաբանական միջոցները և տեղեկատվական դերը նախադասության մեջ շատ քիչ են ուսումնասիրված լեզվաբանական գրականության մեջ: Լեզվաբանների մի խումբ (Լ.Ս.Բարխուդարով, Ե.Ա.Կորբինա, Ն.Ա.Կորնեևա, Վ.Ն.ժիգալով, Ս.Պ.Իվանովա, Լ.Լ.Իոֆիկ, Օ.Ս.Ախմանովա, Բ.Ի.Խայնովիչ և այլք) բացահայտիչը չեն առանձնացնում որոշից, այն դիտելով, սակայն, որպես որոշիչի մի հատուկ տեսակ, որն արտահայտվում է գոյականով և ցույց է տալիս լրացյալի (բացահայտյալի) ով կամ ինչ լինելը, մի այլ անուն տալիս նրան: Հայ լեզվաբանության մեջ նույնպես տեղ է գտել այս կարծիքը: Մ.Աբեղյանը բացահայտիչը որակավորում է որպես առարկայական որոշիչ, որը դիտվում է որոշյալ բառից հետո և գործածվում է նույն հոլովով, ինչ և որոշյալ բառը:

Լեզվաբանների մի այլ խումբ, մասնավորապես, Ջ.Լիչը, Յա.Սվիրիժևիչը, Ռ.Քվիրքը և Ս.Գրինբաունը, հայ լեզվաբաններից Մ.Ասատրյանը, Գ.Ջահուկյանը, Ռ.Իշխանյանը, Ս.Գյուլբուղաղյանը, բացահայտիչն առանձնացնում են որպես նախադասության ինքնուրույն երկրորդական անդամ:

Բացահայտիչի բնույթի վերաբերյալ տարածայնություններն իրենց արտահայտություններն են գտել նաև տերմինաբանության մեջ: Որոշ հեղինակներ բացահայտիչն ու բացահայտյալը անվանում են համապատասխանաբար apposition և anticident, apposition և headword (Ն.Ա.Կորբինա, Ե.Ա.Կորնեևա, Բ.Իվիչ), appositive 1 և appositive 2 (Ռ.Քվիրքը Ս.Գրինբաունը), ռուս լեզվաբանության մեջ ընդունված են приложение և

определяемое слово տերմինները: Մեր կարծիքով, այս երկու շարահյուսական միավորների բնույթն ամենասպառաչ ձևով արտահայտվում է հայերեն «բացահայտյալ» (այսինքն՝ մի բան, որ բացահայտվում է և «բացահայտիչ» (մի բան, որ բացահայտում է) տերմիններում:

Անգլերենում ընդունված է տարբերակել բացահայտչի երկու տեսակ՝ չտրոհված (close apposition) և տրոհված (loose apposition): Սրանք միմյանցից տարբերվում են ինչպես արտահայտման ձևերով, այնպես էլ՝ նախադասության մեջ ունեցած տեղեկատվական դերով: Այստեղ մենք կփորձենք ներկայացնել տրոհված բացահայտիչը, անդրադառնալով նրա կառուցվածքին և իմաստային առանձնահատկություններին:

Տրոհված բացահայտիչը միշտ ունի ետադաս շարադասություն և բացահայտյալից անջատվում է հիմնականում ստորակետով, որոշ դեպքերում՝ նաև միջակետով կամ բութով, որը բացահայտիչին տալիս է մեծ շեշտ և կարևորություն նախադասության մեջ:

Տրոհված բացահայտիչը հիմնականում արտահայտվում է գոյականով կամ գոյականով կազմված բառակապակցությամբ և լրացնում է գոյականով կամ բառակապակցությամբ արտահայտված բացահայտյալի, ինչպես.

My brother, Don Croce, has sent me to ask if you would like to take refuge with him in Village. (Puzo)

After that she married Ridgway Becker, the American yacht owner. (Christie)

Հաճախ գոյականով արտահայտված բացահայտիչն իրենից ներկայացնում է բացահայտյալի կրկնությունը: Այս դեպքում այն կատարում է ոճաբանական ֆունկցիա, նախադասությանը հաղորդելով լրացուցիչ զգացմունքայնություն կամ ընդգծելով բացահայտյալի կարևորությունը: Բառի կրկնությամբ արտահայտված բացահայտիչը միշտ լրացվում է որոշչով, լինի դա բառ, բառակապակցություն, թե երկրորդական նախադասություն, քանի որ միայն բառի կրկնությամբ բացահայտիչը զուրկ կլներ որևէ տեղեկատվական արժեքից: Օրինակ.

And their hands were not the hands. She remembered, tapering, delicate hands... (Laurence)

Harvey had passed him convention programme and he scribbled the words on the back – words which would destroy him utterly they were used. (Hailey)

Բերված օրինակներում բացահայտիչի քերականական իմաստը, հետևաբար նրա կատարած ֆունկցիան նախադասության մեջ, պայմանավորված է նրան լրացնող որոշչով, քանի որ, եթե նախադասության միևնույն բառով արտահայտված անդամները լրացվեն իմաստով միմյանցից հեռու որոշիչներով, ապա դրանք պետք է համարել ոչ թե բացահայտիչ և բացահայտյալ, այլ նախադասության համազոր անդամներ, ինչպես հետևյալ օրինակում.

The insolence of the words, the insolence of those black-and-white uniforms, aroused an icy fury in Guiliano. (Puzo)

Այս օրինակում of the words և of those black and white uniforms որոշիչների շնորհիվ insolence բառը բառակապակցություններից յուրաքանչյուրում ձեռք է բերում տարբեր իմաստներ, հետևաբար the insolence of the words և insolence of those black – and – white uniforms բառակապակցությունները պետք է համարել նախադասության համազոր ենթականեր:

Անդրադառնալով բացահայտիչի ու բացահայտյալի և նախադասության համազոր անդամների հարցին, անհրաժեշտ է նշել, որ նրանց միջև տարբերությունը կայանում է ինչպես շարահյուսական կապի տեսակի, այնպես էլ՝ իմաստի մեջ: Եթե նախադասության համազոր անդամները միմյանց կապվում են համադասական կապով, ապա բացահայտչի և բացահայտյալի միջև հաստատվում է մի շարահյուսական կապ, որն ամենից ավելի մոտ է ստորոգմանը: Սա թեմա-ռեմատիկ կապ է, քանի որ բացահայտիչն իր իմաստով վերագրվում է բացահայտյալին: Այստեղից բխում են նաև համազոր անդամների և բացահայտիչի ու բացահայտյալի իմաստային տարբերությունները, եթե նախադասության համազոր անդամները մատնանշում են տարբեր առարկաներ, բացահայտիչն ու բացահայտյալը նշում են միևնույն առարկան, սակայն՝ տարբեր ձևերով: Հենց սրանով է բացատրվում վերը բերված օրինակների տարբերությունը:

Գոյականով արտահայտված բացահայտիչը կարող է լրացնել դերանվանմամբ արտահայտված բացահայտյալի: Այս դեպքում անհրաժեշտ է առանձնացնել բացահայտչի իմաստային երկու տեսակ.

ա) եթե բացահայտիչն անջատված է բացահայտյալից նախադասության այլ անդամով, ապա այն կոնկրետացնում, ճշգրտում է բացահայտյալի արտահայտած իմաստը, օրինակ.

They've no sense, girls, you must realize that. (Christine)

բ) եթե բացահայտիչն անմիջապես հետևում է բացահայտյալին, այն հաճախ կրում է արտահայտչական երանգ, գործածվում է ոճական նկատառումներով: Օրինակ. I tell that you. I, Poirot. (Christine)

Այսուհանդերձ չի կարելի պնդել, որ ճշգրտող բացահայտիչը միշտ բացահայտյալից անջատվում է նախադասության այլ անդամով: Այն կարող է դրվել նաև անմիջապես բացահայտյալից հետո, ինչպես.

When I considered that, I engaging smile, ... I could well understand that Isabel was in love with him. (Maugham)

Գոյականով արտահայտված բացահայտիչը կարող է լրացնել նաև խոնարհված բայով արտահայտված բացահայտյալին: Այս դեպքում անհրաժեշտ է առանձնացնել երկու մոդել.

ա) բայն ու գոյականը ունեն միևնույն արմատը, և գոյականը (բացահայտիչը) լրացվում է որոշիչ երկրորդական նախադասությամբ, օրինակ.

It had been raining for three days, an ugly rain that washed the brilliance of near spring (նույն արմատով) (Bain)

բ) բայն ու գոյականը արտահայտում են միմյանց մոտ լեքսիկական իմաստներ, ըստ որում գոյականը նորից լրացվում է որոշիչ երկրորդական նախադասությամբ, օրինակ.

Finally he looked up, a darting glance that bounced quickly between Virginia and Palmer several times. (միմյանց մոտ բառիմաստներով) (Bain)

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն դեպքերը, երբ բացահայտիչը լրացնում է ոչ թե նախադասության այս կամ այն անդամին, այլ ամբողջ նախադասությանը, կարծես ամփոփելով նրանում արտահայտված միտքը: Այս դեպքում բացահայտիչը միշտ արտահայտված է լինում

վերացական գոյականով և լրացվում է ինչպես նախորդ օրինակներում, որոշչով կամ որոշիչ երկրորդական նախադասությամբ: Օրինակ.

...the heel was badly worn on the outside edge, a peculiarity which told them the man belonging to that heel undoubtedly walked with a same what ducklike waddle. (Bain)

Then quickly and methodically he shot each of the fair mules, a warning to anyone who might help the enemies of Guiliano, even indirectly. (Puzo)

Բերված օրինակներում անհնար է առանձնացնել բայ-գոյական զույգեր, ինչպես "had been raining – rain", "looked up- glance":

Այսպիսով, գոյականով արտահայտված բացահայտչի համար կարելի է առանձնացնել հետևյալ մոդելները.

$N_1 + N_2$, Pr. + N, V + N (+Attr.), Sent. + N (+Attr.)

Չնայած ընդունված կարծիքին, որ բացահայտիչը միշտ արտահայտված է լինում գոյականով, նրա արտահայտման միջոցներն ամենատարբեր են: Կարելի է առանձնացնել ոչ-գոյական խոսքի մասերով արտահայտված բացահայտչի հետևյալ մոդելները.

1. Inf. + inf.

Այստեղ կարևոր է այն փաստը, որ ոչ-գոյական խոսքի մասով արտահայտված բացահայտիչը պետք է լրացնի նույն խոսքի մասով արտահայտված բացահայտյալի: Օրինակ, եթե նախադասության ինֆինիտիվով արտահայտված անդամը ետադաս շարադասությամբ լրացնի գոյականով արտահայտված անդամի, այն պիտի համարվի որոշիչ: Անհրաժեշտ պայման է նաև այն, որ երկու ինֆինիտիվները արտահայտեն միմյանց մոտ լեքսիկական իմաստներ, այլապես նրանք կհամարվեն նախադասության համագոր անդամներ, որի մասին խոսվել է վերը: Բերենք ինֆինիտիվով արտահայտված բացահայտչի օրինակներ.

For an instant he was tempted to confide in Margaret, to tell her everything that had occurred so swiftly. (Hailey)

Of course she began to dream about Count Dionys: to yearn wistfully for him.

(Laurence)

Եկրորդ օրինակում, բացի մեր բերած չափանիշներից, նաև կետադրությունն է ապացուցում, որ ինֆինիտիվներով արտահայտված անդամները համազոր չեն, քանի որ նախադասության համազոր անդամները չեն անջատվում միջակետով:

2. Adv. + adv. կամ adv. + prep. phrase

Մակրայով արտահայտված բացահայտիչը համապատասխանաբար պետք է լրացնի մակրայով արտահայտված բացահայտյալի, ինչպես.

You must get there at once – today. (Christine)

Նման բացահայտիչը սովորաբար ճշտում, կոնկրետացնում է գործողության տեղը կամ ժամանակը: Այս կոնկրետացումը երբեմն անհրաժեշտ է, երբ բացահայտյալն արտահայտված է այսպես կոչված դեյկտիկ բառերով: Դրանք, ըստ Ջ.Լայոնսի¹, այն բառերն են, որոնց արտահայտած իմաստը կախված է կոնկրետ իրադրության մեջ հանդես եկող այլ օբյեկտներից (here, there, today, now և այլն): օրինակ. I only spent a night there, at the station hotel. (Christine)

3. Adj. + adj. կամ Prep. phrase + adj.

Բացահայտիչը կարող է արտահայտվել ածականով, սակայն, ինչպես արդեն ասվել է, բացահայտյալի հետ ձևաբանական և լեքսիկական նույնության կամ նմանության պայմանով, ինչպես.

I'm of the earth, earthy. (Maugham)

Բերված օրինակում բացահայտյալը, թեպետ արտահայտված է գոյականով, of նախդիրի շնորհիվ այն ստացել է ածականական իմաստ, որի հետևանքով էլ earthy բառը պետք է համարել նրան լրացնող բացահայտիչ:

4. Երբեմն բացահայտիչը բավական ընդարձակ մեջբերում է, թեպետ նման օրինակները գրականության մեջ շատ չեն:

Օրինակ. He approached the matter with his famous tact, "Not as if I was her uncle, my dear fellow, but as man of the world speaking to an experienced girl" but he did not better than his mother had done. (Maugham)

¹ John Lyons, Introduction to Theoretical Linguistics, Cambridge, 1968.

Գալով նախադասության մեջ բացահայտիչի տեղեկատվական դերին, անհրաժեշտ է նշել, որ չնայած լեզվագիտության մեջ տեղ գտած հակիրճ սահմանմանը, ըստ որի բացահայտիչը մի այլ բառով է արտահայտում բացահայտյալի իմաստը, այլ անվանում տալիս նրան, բացահայտիչի արտահայտած իմաստներն ամենաբազմազան են սկսած մի այլ անվանում տալուց մինչև խոսողի վերաբերմունքն արտահայտելը:

1. Բացահայտիչն ու բացահայտյալը կարող են համընկնել իրենց լեքսիկական իմաստների ծավալներով: Բացահայտիչի իմաստի ընդունված ձևակերպումը ճիշտ է բացահայտիչի հենց այս տեսակի վերաբերյալ. այն մի ուրիշ անուն է տալիս բացահայտյալին, օրինակ.

Suddenly they were passing through a *stand of trees*, a small forest. (Puzo)

Նույնության իմաստ արտահայտող բացահայտիչը երբեմն կարող է արտահայտվել մեկ այլ լեզվից վերցված բառով, կամ էլ բացահայտյալն է արտահայտված օտարալեզու բառով, իսկ բացահայտիչը՝ անգլերեն (այս դեպքում բացահայտիչն այդ բառի բարձրագույնությունն է կամ բացատրությունը): Երկու դեպքում էլ բացահայտիչի և բացահայտյալի իմաստային ծավալները համընկնում են: Օրինակ.

Patrols of National Police, the carabinieri, roamed the countryside, set up road-blocks, paid information. (Puzo)

Then one night ... the neighbor had been found almost cut in two by the blast of a *lupara*, the sawed-off shotgun so popular in Sicily for such matters. (Puzo)

Եթե օտարալեզու բառով արտահայտված բացահայտիչը ոճական երանգ է կրում, գործածվում է որոշակի կոնտեքստում, համապատասխան լեզուն կրողների մտքերը կամ տրամադրությունները ընթերցողին փոխանցելու նպատակով, ապա հակառակ դեպքում օտարալեզու բացահայտյալի և անգլերեն բացահայտիչի դեպքում, բացահայտիչը կատարում է որոշակի տեղեկատվական դեր նախադասության մեջ, բացահայտելով, պարզաբանելով բացահայտյալի ինչ լինելը:

կոնկրետացնող ֆունկցիա: Այս տիպի բացահայտիչը կարելի է անվանել մասնավորեցնող, և քանի որ գոյականին համապատասխանող մասնավոր իմաստները լեզվում անսահմանապակ են, այս բացահայտչի տեղեկատվական հնարավորությունները նախադասության մեջ շատ լայն են:

ա) Բացահայտիչը կարող է նշել բացահայտյալի անունը, վերնագիրը և այլն:

Օրինակ. *Another man*, Comstock, with a sharp, foxy faze and alert eyes, broke in.

(Christie)

We were making *the picture*, "A Song is Born" with Danny Kaye, when that band happened, (Jones)

բ) Բացահայտյալի իմաստն է կոնկրետացնում նաև այն բացահայտիչը, որը նշում է բացահայտյալով արտահայտվածի պաշտոնը, մասնագիտությունը, ազգությունը, ինչպես.

At that time *Joe Glaser*, Louis' manager, had serious doubts about Europe as a commercial position. (Jones)

գ) Մասնավորեցնող բացահայտիչը կարող է արտահայտել ազգակցություն, ինչպես.

At that moment her maid announced *Lady Bingham* – her husband's sister.

(Laurence)

դ) Մասնավորեցնող են նաև դեյկտիկ բառերով արտահայտված բացահայտյալին լրացնող բացահայտիչները, որի մասին խոսվել է վերը:

3. Բացահայտչի լեքսիկական իմաստը կարող է ավելի լայն լինել, քան բացահայտյալինը: Այս դեպքում դիտվում է նախորդ կետում քննարկված երևույթի հակառակ երևույթը. խոսողի միտքն ընթանում է կոնկրետից ընդհանուրը, այսինքն՝ բացահայտիչը կատարում է ընդհանրացնող ֆունկցիա: Այստեղ կարելի է առանձնացնել հետևյալ ենթակետերը.

ա) Բացահայտիչը կարող է ամփոփել, ընդհանրացնել բազմակի բացահայտյալների առանձին իմաստները, օրինակ.

He would never leave *these mountains, these olive tress*, this Sicily. (Puzo)

The mother and I – we are lovers. (Christie)

բ) Ընդհանրացնող իմաստ է արտահայտում նաև այն բացահայտիչը, որը լրացնում է բայով կամ նախադասությամբ արտահայտված բացահայտյալին (այս մասին խոսվել է բացահայտչի արտահայտման միջոցների մասին խոսելիս):

Օրինակ. The father ... left home suddenly with another woman- a fact which her mother naturally resented. (Christie)

The Maresciallo lit a cigarette and stutted up the Via Bell not even noticing Guiliano – an oversight he was to regret in the weeks to come. (Puzo)

Ինչպես արդեն ասվել է, բացահայտչի այս տեսակը միշտ արտահայտված է լինում վերացական գոյականով. մի փաստ, որ նույնպես մատնանշում է բացահայտչի ընդհանրացնող իմաստին:

4. Բացահայտիչը կարող է կատարել նկարագրական ֆունկցիա, որը ձեռք է բերվում նրան լրացնող որոշի (որոշիչների) շնորհիվ, ինչպես.

A team of cricketness passed, agile young men in flannels and blazers... (Maugham)

So we take a walk in the country up near *Erice*, a beautiful town... (Puzo)

Նկարագրական ֆունկցիան կարող են կատարել նաև բազմակի բացահայտիչները: Օրինակ.

And I was glad when I got into the vast and sumptuous *drawing-room*, all statue, palms, chandeliers, old masters, and oversuned furniture. (Maugham)

He had a rugged, unfinished look; a short blunt nose, a sensual mouth, and the florid Irish complexion... (Maugham)

Նկարագրող կարող է լինել բառի կրկնությամբ արտահայտված բացահայտիչը, կրկին որոշի (որոշիչների) շնորհիվ, քանի որ միայն բացահայտյալի կրկնության դեպքում բացահայտիչն առհասարակ որևէ ինֆորմացիա չէր կարող ներմուծել նախադասության մեջ և պետք է համարվեր ոչ թե նախադասության անդամ, այլ զուտ բառի կրկնություն՝ ոճաբանական

հնարք: Բերենք օրինակներ, որոնցում բացահայտիչն ու բացահայտյալն արտահայտված են միևնույն բառով, և բացահայտիչը կատարում է նկարագրական ֆունկցիա.

His black eyes opened: large, black, unseeing eyes, with curved black lashes.

(Laurence)

... and their hand were not the hands she remembered, tapering, delicate hands – they were harsh from washing up and detergants. (Christie)

Այս նույն ֆունկցիան բացահայտիչը կարող է կատարել ոչ թե բառի, այլ բառիմաստի կրկնությամբ.

He had a scar on his left thumb, a deep seam going across the knuckle. (Laurence)

5. Բացահայտիչը կարող է արտահայտել որակավորող իմաստ, որը չպետք է շփոթել նկարագրական իմաստի հետ: Եթե նկարագրող բացահայտիչը տալիս է բացահայտյալի նկարագիրը, ապա որակավորող բացահայտիչը արտահայտում է խոսողի վերաբերմունքը բացահայտյալով արտահայտվածի նկատմամբ, նրա սուբյեկտիվ ընկալումը: Օրինակ.

And the rather handsome military man in the corner was real ... and the Bishop (dear Robbie!) was dead. (Christie)

Who could deny that Elliot, that arch-snob, was also the kindest, most considerable and generous of men? (Maugham)

Այս խմբում ընդգրկված բացահայտիչը երբեմն խոսքին տալիս է ոճական երանգ, գործածվելով որպես համեմատություն (ոճաբանական հնարք): Օրինակ.

The story stated that Guilliano was the greatest bandit of modern times, an Italian Robin Hood who rebbed the rich to help the poor. (Puzo)

In all big cities there are self-contained groups that exist without intercommunication, small worlds within greater world that lead their own lives... (Puzo)

6. Վերջապես բացահայտիչը կրողը է արտահայտել պարագայական իմաստ (այս իմաստով գործածվող բացահայտիչը չպետք է

շփոթել մակբայով արտահայտված բացահայտիչի հետ, որը լրացնում է նույնպես մակբայով արտահայտված բացահայտյալի): Օրինակ.

He knows all about everything – a man of the world. (Galsworthy)

A man of the world բացահայտիչն այստեղ կարծես գեղջված պարագա երկրորդական նախադասություն լինի: Չմմ. He knows all about everything as he is a man of the world (պատճառի պարագա երկրորդական նախադասություն)

Ամփոփելով վերը շարադրվածը, գալիս ենք երկու հիմնական եզրակացության.

1. Բացահայտիչի և բացահայտյալի արտահայտման ձևաբանական միջոցը չպետք է համարել միայն գոյականը:

2. Բացահայտիչի տեղեկատվական դերը նախադասության մեջ չի սահմանափակվում բացահայտյալը մի այլ բառով անվանելու ֆունկցիայով, այն շատ ավելի մեծ է ու բազմազան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեդյան Մ., Չայնգ լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 393, 509
2. N.A. Kobrina, E.A. Korneyeva, English Grammar, Syntax, M., 1986
3. B. Ilyish, The Structure of Modern English, լւ. 1971, էջ 244
4. R. Quirk, S. Greenbaum, A University Grammar of English, London, 1978, էջ 174
5. Իշխանյան Ռ., Արդի հայերենի շարահյուսություն, Երևան, 1965
6. E.C. Мхитарян, К вопросу о природе приложения. (Օտար լեզուները բարձրագույն դպրոցում), Երևան, 1995
7. E.C. Мхитарян, Дейтйчейские слова в прямой и косвенной речи. (Вестник Ереванского Университета), Ереван, 1981
8. John Lyons, Introduction to Theoretical Linguistics, Cambridge, 1968, էջ 138
9. П.С. Бархударов, Структура простого предложения современного английского языка, М., 1996, էջ 123-124

ԼՐԱԳՐԱՅԻՆ ՏԵՔՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի ժամանակագրական հոդվածի փաստական նյութի հիման վրա

Ներկա հոդվածի հիմքում ընկած է այն համընդհանուր դրույթը, որ տեքստը որպես խոսքային ստեղծագործության արդյունք լեզվական հաղորդակցության /տե՛ս 7; 9/, ինչպես նաև հոգեբանական-խոսքային և գործաբանական բնույթի միավոր է /10, 36/:

Հարկ է նշել, որ լեզվական հաղորդակցությունը բավականին բարդ ու բազմատարր մի ամբողջություն է, որտեղ զուտ լեզվական ոլորտի ուսումնասիրությունները համակցվում են արտալեզվական ուսումնասիրություններին՝ անմիջական մասնակցություն ունենալով տեքստի կազմակերպման մեջ: Իսկ տեքստը հանդես է գալիս որպես հասցեագրողի կողմից կողակորված տեղեկատվություն, որը ենթարկվում է հասցեատիրոջ ապակողակորմանը: Կապված տեքստի հաղորդակցական հայեցակերպի հետ՝ վերլուծության մեջ ի հայտ է գալիս նաև մեկ այլ լեզվաբանական գիտակարգ՝ տեքստի գործաբանությունը:

Տեքստի գործաբանությունը բավականին ընդգրկուն հասկացություն է, սակայն միևնույն ժամանակ նույնքան էլ անմիանշանակ: Այն իր շրջանակներում ներառում է այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են՝

ա/ տեքստի գործաբանություն բուն իմաստով, այսինքն՝ ցանկացած տեքստի այն անհրաժեշտ յուրահատկությունը, որը մատնանշում է հասցեագրողի վերաբերմունքը հաղորդակցման օբյեկտի, ինքնին հաղորդակցման ակտի և վերջինիս միջոցով հասցեատիրոջ հանդեպ, բ/ հասցեագրող /հեղինակ/ և հասցեատեր, գ/ տեքստի գործաբանական նպատակադրություն և ռ/ ծրագրավորվող գործաբանական ներգործություն:

Այս կապակցությամբ Վ.Լ.Նաերը միանգամայն արդարացիորեն գրում է. «Տեքստի գործաբանությունն՝ իր ամբողջ էությամբ հանդերձ հիմնված է

ներգործման գործառույթի վրա, որն ապահովվում է տեքստի համապատասխան կառուցվածքային մասնատմամբ, ասույթային և վերասույթային մակարդակներում առկայական տրոհման բնույթով ու որոշ այլ միջոցներով և ամենից շատ այն գործաբանական բովանդակությամբ, որը կարգավորում է բովանդակության իմաստային կողմի ընկալման տեսանկյունը, ինչպես նաև տեղեկություն է կրում արդեն ոչ թե արտաքին աշխարհի /հաղորդակցման օբյեկտի/, այլ հաղորդակցման ակտի մասնակիցների հասցեագրողի և հասցեատիրոջ մասին: Այս ամենն է, որ մեկ ամբողջություն դարձած՝ ապահովում է համապատասխան ազդեցությունը, հասցեատիրոջ կողմից տեքստի բովանդակության ապակողակորման շնորհիվ բացահայտում գործաբանական այն նպատակադրությունը, որն ընկած է տեքստի հիմքում» /9, 11/:

Արդի լեզվաոճաբանության մեջ մշակվող խնդիրների շարքում գրական լեզվի գործառական տարատեսակների ուսումնասիրությունները որոշակի կարևորություն են ձեռք բերել: Այնպիսի գործառական ոճերի լեզվական, ժանրային, կառուցվածքային, արտահայտչական և այլ առանձնահատկությունները, ինչպիսիք են գեղարվեստական արձակ ու չափածո ոճը, վարչագործարարական, գիտական, հրապարակախոսական ու լրագրային ոճերը, դարձել են բազմաթիվ դասագրքերի, հոդվածների, ժողովածուների ու մենագրությունների /այդ թվում նաև ատենախոսությունների/ հետազոտության օբյեկտը /տե՛ս 2; 3; 5; 6; 11/:

Ուսումնասիրությունները փաստում են, որ գրական լեզվի տարատեսակներից լրագրային ոճն է աչքի ընկնում իր ընթերցողների ընդգրկման ծավալով, քանի որ նրան հատուկ են հստակ արտահայտված հաղորդակցական նպատակներն ու ընդգծված գործաբանական ուղղվածությունը: Սա է պատճառը, որ տեքստի ապակողակորման հարցում լրագրային տեքստերը հիմնականում ապահովում են առավելագույն պայմաններ:

Լրագրային ոճի հիմնական նպատակն ընթերցողին տեղեկատվությամբ ապահովելու, նրա վրա ներգործելու, նրանում

համապատասխան աշխարհայացք ձևավորելու և հասարակական-քաղաքական գիտակցության մղելու առանձնահատկություններն են /տե՛ս 1; 4/։
Սույն հետազոտության թիրախ է դարձել ժամանակագրական հոդվածի ժանրը։

Ժամանակագրական հոդվածը տեղեկատվության պարզ ձևերից մեկն է, որը սովորաբար սեղմ տեղեկատվություն է պարունակում ընդգրկելով որևէ կարևոր նորություն։ Այս ժանրի հիմնական տարբերակիչ գիծը կայանում է նրանում, որ այն ներկայացնում է միայն ամենաթարմ ու նոր փաստերը՝ զերծ մնալով մանրամասնություններից։

Ժամանակագրական հոդվածների խնդիրը փաստերի ներկայացումն է, այլ ոչ թե վերջիններիս նկարագրությունը կամ մեկնաբանությունը։ Այս առանձնահատկությամբ հանդերձ՝ ժանրի խնդրով է պայմանավորվում նրա յուրահատուկ ոճական գծերից մեկը՝ լակոնիզմը։ Ավելորդ բառերն ու արտահայտությունները, շարահյուսական կառույցները դիտվում են որպես սլոյալ ժանրի թերություն և տեղեկատվության նորմերի խախտում։

Ժամանակագրության լեզվի հաղորդակցական գործառույթը հանդես է գալիս իր ուղիղ ձևով՝ ընդգծված ու հստակ և ընթերցողից չի պահանջում ավելորդ խորհրդածություն ու հուզական լարում։ Այստեղ կարևորվում է ոչ թե բառիմաստի խորամուխ լինելը, նրա իմաստաբանական միջուկի բացահայտումը, բովանդակության տրամաբանական ընկալունակությունը, ինչպես օրինակ՝ գիտական ոճում, ոչ թե գեղագիտական երանգավորումներն ու նրբիմաստները, որոնք շերտավորվում են բառի անվանական իմաստի վրա, ինչպես գեղարվեստական գրականության մեջ, այլև՝ անմիջական լրատվությունը։

Ժամանակագրական հոդվածն աչքի է ընկնում հաղորդվող նյութի հրատապությամբ, պաշտոնականությամբ, ու հեղինակային խոսքի անդեմությամբ, որի մասին է վկայում ժանրի չեզոք ու կաղապարված լեզուն և պաշտոնական ոճի ակնհայտ ներգործությունը։ Այս ընդհանուր գծերը հուշում են նաև ժամանակագրության հստակ արտահայտված հաղորդակցական ու գործաբանական նպատակադրության մասին, այն է՝ հաղորդել առավելագույն տեղեկատվություն չափազանց սեղմ տեքստային հատվածում։

«Հասցեագրողի /հեղինակի/ վարքագծում առկա են երկու ծայրահեղություն. կամ շարադրանքն ամբողջապես օբյեկտիվ է և նրանից անհնար է որևէ տեղեկություն քաղել հեղինակի մասին կամ ամբողջ շարադրանքը կապված է հեղինակի հետ» /8, 299/։ Ժամանակագրության ժանրում, ըստ երևույթին, դրսևորվում է առաջին տարբերակը, քանի որ այստեղ բացառվում է տեքստի հեղինակի /սլոյալ դեպքում՝ հոդվածագրի/ անհատականությանը բնորոշ գծերի ի հայտ գալը։ Սակայն նման տեքստերի արտաքին կառուցվածքի տրոհումը տալիս է միանգամայն այլ պատկեր։

French train fireball kills 12

TWELVE people were killed and 39 injured when a train rammed into a fuel truck at an automatic rail crossing in France, engulfing the train in flames. At least eight of the injured were said to be in a critical condition.

The train, travelling from Bordeaux to Bergerac in south-western France, ploughed into the fully laden truck in the town of Sainte-Antoine du Breuilh.

Local officials said the truck's cab slammed into a house while the tanker was dragged along by the train before its 30.000 litres of petrol burst into flames (*The Guardian, September 9, 1997*).

Սույն հոդվածը ներառում է երեք առավելագույնս սեղմ պարբերություն /այդ թվում՝ նաև տեքստի վերնագիրը/ և դասվում փոքրածավալ հաղորդագրական հոդվածների թվին։ Ակներև է, որ տեքստում առկա չէ ներկայացված իրադարձությունների ու երևույթների հեղինակային վերաիմաստավորում և անհատական երանգավորում։ Սա պայմանավորված է նրանով, որ հաղորդագրությունն աչքի է ընկնում իր հրատապությամբ, և վերջինիս համար առաջնակարգ կարևորություն է ներկայացնում անմիջական լրատվությունը։

Ակնբախ է այն փաստը, որ ներկայացված ոչ մի նախադասություն չի պարունակում զնահատողական ոչ մի տարր: Տեքստում հեղինակը զետեղել է փաստացի տեղեկատվություն:

Կառուցվածքային առումով վերոհիշյալ հաղորդագրությունը չունի տեքստային ավանդական կառուցվածքին բնորոշ այն տարրերը, որոնք մեծ կարևորություն են ներկայացնում տեքստային տեղեկատվության ընդհանուր ամբողջացման համար: Ակնբռն է, որ հոդվածը զերծ է տեքստային կառուցվածքին հատուկ դասական նախաբանից ներքին հիմնակմախքից ու վերջաբանից:

Հոդվածի վերջին հատվածը /չորրորդ պարբերություն/, ամբողջապես չի սպառում ընդհանուր շարադրանքը, այլ պարզապես հաղորդում է լրացուցիչ տեղեկություն առկա պատահարի վերաբերյալ /Local officials said the truck's cab slammed into a house while the tanker was dragged along by the train before its 30,000 litres of petrol burst into flames./:

Տեքստի վերնագիրն ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում ամբողջ հաղորդագրության հակիրճ բովանդակությունը: Վերջինս նպատակահարմար է դասել «վերնագիր-հաղորդագրություն» շարքին /տես 7/: Սա է պատճառը, որ «French», «train», «fireball», «kills 12» միավորները կազմում են տվյալ հաղորդագրության իմաստաբանական դաշտը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ հաղորդագրությունը հարուստ է թվերով /«12», «39», «eight», «30, 000»/ և վերջինս մեկ անգամ ևս ապացուցում է տեքստում փաստացի տեղեկատվության առկայության մասին:

Ինչպես գիտենք, ԽՍՀՄ ժամանակաշրջանում Հայաստանի արտահանման մեջ հիմնական մասը կազմում էր վերամշակող արդյունաբերության ճյուղերի արտադրանքը (մեքենաներ և սարքավորումներ, տրանսպորտի միջոցներ, քիմիայի և նրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք): Տնտեսական և հատկապես էներգետիկ ճգնաժամի պայմաններում այս ճյուղերի արդյունաբերական ձեռնարկությունները մատնվեցին անգործության: Աղետալի չափերով կրճատվեց համախառն ներքին արդյունքի ծավալները: Հարց է առաջանում, կարո՞ղ էր արդյոք Հայաստանը ապահովել տնտեսական աճ և կազմակերպել նախկին ծավալներին համապատասխան արտահանում, եթե չլիներ տնտեսական ճգնաժամը: Հայաստանի հիմնական առևտրային գործընկերները նախկին Խորհրդային և սոցիալիստական երկրներն էին և արտահանման (ինչպես նաև ներմուծման) հիմնական բաժինը ընկնում էր այս երկրներին: Նախապես պլանավորված գների, քանակի և առաքման վայրի պայմաններում թողարկվող արտադրանքի որակը սկսում էր ավելի ու ավելի քիչ դեր խաղալ:

Վերը նշվածը թույլ է տալիս ենթադրելու, որ հոգեբանական մեթոդների կիրառումը մտավոր զարգացման բարձր մակարդակ ունեցող երեխաների ընտրության, ինչպես նաև ուսուցման կազմակերպման հարցում կարող է մեծ նշանակություն ունենալ: Անհրաժեշտ է մշակել, տեղայնացնել հոգեբանական մեթոդիկաների փաթեթ, որը հնրավորություն կտա բացահայտել տարբեր ընդունակությունների զարգացման մակարդակը, դրանց ուղղվածությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել օժտված երեխաների արդեն ձևավորված ընդունակությունները, ընտրել համապատասխան ուսուցման եղանակներ: Առաջին հերթին սրան կարելի է հասնել ուսուցման տարբերակված, առանձին դեպքերում նաև՝ անհատական ծրագրերի միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Анастаси А. Психологическое тестирование, М-1982.
2. Артемьева Ф. И. Методологический аспект проблемы способностей, М-1977.
3. Бурлачук А. Р., Морозов С. М. Словарь — справочник по психологической диагностики, Киев — 1989.
4. Вопросы психологии способностей. Под ред. В. А. Крутецкого, М-1973.
5. Гильбух Ю. З. Внимание: одаренные дети, М-1991.
6. Общая психодиагностика. Под ред. А.А. Бодалева, В.В. Столина.
7. Психология одаренности детей и подростков. Под ред. И. С. Лейтеса, М- 1996.
8. Платонов К.К. Проблемы способностей, М-1973.

Արտադրության ծավալների ընդլայնումը կրում էր հիմնականում էքստենսիվ բնույթ, իսկ աշխատանքի արտադրողականության աճի տեմպը սկսած 60-ական թվականների վերջերից սկսում էր ավելի ու ավելի հետ մնալ զարգացած երկրներին հատուկ ցուցանիշներից:

ԽՍՀՄ անկումից հետո, առաջինը կապերը խզվեցին Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրների հետ, որոնք միանգամից իրենց հայացքները ուղղելով դեպի արևմուտք, սկսեցին գտնել նոր առևտրային գործընկերներ՝ ձգտելով արտադրության արդյունավետության չափանիշները համապատասխանեցնել արևմտյանին: Դա առաջին հերթին ենթադրում էր նոր արտադրողականության ժամանակակից ստանդարտներին համապատասխան արտադրության միջոցների, մեքենաների և սարքավորումների ձեռք բերում զարգացած երկրներից: Ջարգացած երկրների լայն չափերի հասնող ֆինանսական օգնությունը (կառուցվածքային, տեխնիկական վարկեր և այլն) թույլ տվեց նրանց կապիտալ ներդրումներ կատարել արդյունաբերության գրեթե բոլոր ոլորտներում և ավելի թեթև տանել տնտեսական ճգնաժամը:

Նախկին ԽՍՀՄ-ում, քաղաքական անկայուն իրավիճակի պայմաններում, արագ խզվեցին կապերը նաև խորհրդային հանրապետությունների միջև և համապատասխան, ռեալ ֆինանսական օգնության բացակայության պայմաններում ազգային անկախացած տնտեսությունները հայտնվեցին կաթվածահար վիճակում: Նույնիսկ Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծումը չչտկեց իրավիճակը:

Այսպիսով, Հայաստանը պետք է նոր գործընկերներ փնտրեր ԽՍՀՄ սահմաններից դուրս: Եթե նույնիսկ Հայաստանում պահպանվեր թողարկվող արտադրանքի նախկին ծավալները (ենթադրվում է, որ չկա շրջափակում և էներգետիկ ճգնաժամ), ապա ամենայն հավանականությամբ Հայաստանը չէր կարող կազմակերպել արդյունավետ արտահանում, քանի որ թողարկվող արտադրանքի որակը չէր համապատասխանում միջազգային չափանիշներին: «Տեխնոլոգիական խզումը» Հայաստանի և մյուս ինդուստրիալ երկրների միջև հասել էր այնքան մեծ չափերի, որ անհրաժեշտ էին լայնածավալ կապիտալ ներդրումներ արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերում՝ այն զարգացնելու և թողարկվող արտադրանքի որակական հատկանիշները բարձրացնելու համար:

Հայաստանի տեղը աշխատանքի միջազգային բաժանման ներկա համակարգում հասկանալու համար նախ կատարենք նախորդ երեք տարիների արտաքին առևտրի վերլուծությունը ըստ առանձին ապրանքատեսակների:

Ինչպես վկայում են վիճակագրական տեղեկագրերը, Հայաստանը գրեթե բոլոր ապրանքատեսակների գծով ունի բացասական հաշվեկշիռ: Բացառություն են կազմում, կաշվի հումքի, մորթու և դրանցից պատրաստված արտադրանքը, կիսաթանկարժեք քարերը, ոչ թանկարժեք և թանկարժեք մետաղները: Նույնիսկ այնպիսի տրադիցիոն ճյուղը ինչպիսին քարի մշակումն է, ունի բացասական հաշվեկշիռ: Մանածագործական իրերի և կոշիկների արտահանման միտումները կայուն չեն և տարբեր տարիներին հաշվեկշիռը կամ դրական է, կամ բացասական: Վերը նշված դրական հաշվեկշիռով ապրանքատեսակները ունեն նաև արտահանման մեջ ամենամեծ տեսակարար կշիռը: Ներմուծման մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն հանքահումքային արտադրանքը, մեքենաները և սարքավորումները:¹

Այսինքն, կարելի է եզրակացնել, որ Հայաստանը վերջին տարիներին մասնագիտացել է ոչ գիտատար ապրանքների արտադրության մեջ: Սա նշանակում է, որ մեր հանրապետությունը այժմ գտնվում է տնտեսության ինդուստրիալիզացիայի առաջին փուլում: Տնտեսական աննախադեպ անկումից հետո հանրապետության տնտեսական վիճակը ընդունելով որպես զրոյական տարբերակ, կարելի է ասել, որ այժմ զարգացնելով ոչ գիտատար ճյուղերի արտադրությունը և արտահանումը, կուտակվում է կապիտալ արդյունաբերության գիտատար ճյուղերի զարգացման համար:

Երկրորդ արտահանում կազմակերպելու համար անհրաժեշտ է հաշվարկել, թե որ ճյուղերում է, որ այժմ Հայաստանը ունի համեմատական առավելություն: Առաջիկա տարիներին մեծացնելով այդ ճյուղերի արտադրությունը և արտահանումը, հնարավոր կլինի պարարտ հող ստեղծել մյուս ճյուղերի զարգացման համար:

¹ Աղբյուրը՝ Հայաստան տնտեսական միտումներ, հաշվարկներ քստ ՀՀ վիճակագրության ավիզների, հոկտեմբեր – դեկտեմբեր 1998, էջ 107 և «Հայաստանի Հանրապետության սոցիալ տնտեսական վիճակը 1999թ. հունվար - դեկտեմբերին» ՀՀ վիճակագրության նախաքարտայում, 2000, էջ 111, 112

ՀՀ տնտեսության ապագայի առանցքային խնդիրներից մեկն է գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների արտադրության այն ուղղվածության անորոշությունը, որ Հայաստանը պետք է զարգացնի երկարաժամկետ հեռանկարում: Երկիրը պետք է մանրակրկիտ քննության առնի իր համեմատական առավելությունները: Մասնավորապես, անհրաժեշտ է քննության առնել երկու այլընտրանքային ռազմավարությունների համեմատական առավելությունները, որոնք կարևորագույն նշանակություն ունեն երկրի տնտեսական աճի տեսանկյունից: Դեպի այլ երկրներ կողմնորոշված ռազմավարությունը պետք է ուշադրության կենտրոնում պահի արտահանման համար որակյալ և էժան ապրանքների արտադրությունը, ինչը արտարժույթի աղբյուր է և դյուրին է դարձնում այլ կենսականորեն անհրաժեշտ ապրանքների ներկրումը: Այլընտրանքային ներքին կողմնորոշվածություն ունեցող տնտեսությունը կենտրոնանում է ներքին շուկայի խնդիրների շուրջ ելնելով ոչ թե սեփական պահանջմունքները բավարարելու նկատառումներից, այլ միջին ժամկետում վճարային հաշվեկշիռը բարելավելու հիմնախնդրից:

Տվյալ երկրի որևէ ապրանքախմբի համար «փաստացի համեմատական առավելության» գործակցի հաշվարկի մեթոդիկան գրվել է Բ. Բալաշի կողմից դեռ 1965թ-ին: Իսկ 1986 թ-ին ՄԱԿ-ի միջազգային զարգացման կազմակերպության հրատարակած աշխատությունում այդ գործակցի հաշվարկի համար առաջարկվում է օգտագործել հետևյալ բանաձևը.¹

$$RCA_{ij} = \frac{(X_{ij} - M_{ij})}{Tk_j(Ti_w / Tk_w)}$$

որտեղ X- արտահանումն է, M- ներմուծումն է, i-ապրանքը, j- երկիրը, k- ողջ ապրանքը, w- աշխարհը

¹ Աղբյուրը՝ UNIDO - International Comparative Advantage in Manufacturing, 1986, Vienna, p. 192-194.

$$T = \frac{X + M}{2}$$

Կատարենք մի քանի պարզաբանումներ. (X - M)-ը j երկրի կողմից i ապրանքի զուտ արտահանումն է, Tk_w - ամբողջ համաշխարհային ապրանքաշրջանառությունն է՝ բաժանած 2-ի, Ti_w-i ապրանքի համաշխարհային շրջանառությունն է՝ բաժանած 2-ի Tk_j -j երկրի ողջ ապրանքաշրջանառությունն է՝ բաժանած 2-ի Ti_w / Tk_w - i ապրանքի տեսակարար կշիռն է համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ: Եթե արտահանումը մեծ է ներմուծումից ապա գործակիցը դրական է, եթե ոչ՝ բացասական: Որքան մեծ է արտահանումը ներմուծումից, այնքան մեծ է գործակիցը: Հայաստանի տարբեր ապրանքային խմբերի համար հաշվարկենք «փաստացի համեմատական առավելության» գործակիցը և պարզենք, թե որ ապրանքների գծով մեր հանրապետությունը ունի համեմատական առավելություն, և ինչ մեծության է այդ գործակիցը: Հաշվարկները կատարվել են 1995, 1996 և 1997 թվականների համար, քանի որ ըստ առանձին ապրանքախմբերի համաշխարհային ապրանքաշրջանառության վերաբերյալ վիճակագրական տվյալները առկա են մինչև 1997 թվականը ներառյալ: Աղյուսներում ստացվել է հետևյալ պատկերը: (Աղյուսակ 1)

Աղյուսակ 1- Հայաստանի «փաստացի համեմատական առավելությունների» գործակիցը տարբեր ապրանքախմբերի համար 1995, 1996 և 1997 թվականներին:

Ապրանքախմբերը	R C A ij		
	1995	1996	1997
Կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	-6,07	-5,5	-4,9
Պատրաստի սննդի արտադրանք	-3,5	-4,9	-4,7
Քիմիայի և նրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	-1,19	-0,98	-1,6
Մանածագործական իրեր	0,42	-0,5	-1,1
Կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	0,23	0,027	0,12
Մեքենաներ և սարքավորումներ	-0,14	-0,32	-0,49
Տրանսպորտի միջոցներ	0,072	-0,093	-0,14
Սև և գունավոր մետաղներ	0,19	0,51	0,62
Կիսաթանկարժեք և թանկարժեք քարեր	3,48	1,07	0,86

Հաշվարկների համար հիմք են ընդունվել հետևյալ աղբյուրները – World Tables, The World Bank 1997, Washington D. C. p. 184 և Հայաստան տնտեսական միտումներ, հոկտեմբեր - դեկտեմբեր 1998, Երևան 1998, էջ 107

Այսպիսով, արտադրությունը զարգացնելու և արդյունավետ արտահանում կազմակերպելու համար, նախ և առաջ պետք է խթանել այն ճյուղերի զարգացումը, որոնք արդեն իսկ ունեն համեմատական առավելություն բանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արդյունահանում, մետալուրգիա, կաշի մորթի և դրանցից պատրաստված իրեր: Արդյունքում կուտակված կապիտալը կներդրվի գիտատար և կապիտալատար ոլորտներում (մեքենաշինություն, սարքաշինություն և այլն) արտադրության վերագինման և թողարկվող արտադրանքի ծավալների ընդլայնման համար և հնարավորություն կստեղծվի նաև այլ ոլորտների գծով կազմակերպել արդյունավետ արտահանում: Իհարկե, արդյունավետ ճյուղերի միջոցով

կուտակված կապիտալը դեռ բավարար աղբյուր չէ ռեալ ներդրումների համար և այն պետք է զուգակցվի արտաքին ներդրումներով, որոնք պետք է կատարվեն հատկապես գիտատար և կապիտալատար ոլորտներում, ինչպիսիք են քիմիական արդյունաբերությունը, մեքենաշինությունը, սարքաշինությունը և այլն: Սակայն մինչ այժմ, Հայաստանում քիչ թե շատ մեծ ծավալներով արտաքին ներդրումներ կատարվել են բուսական ծագման արտադրանքի վերամշակման ոլորտում, իսկ աշխարհում դժվար թե գտնվի մի երկիր, որը չունի համեմատաբար ժամանակակից ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և «Կոկա-Կոլայի» գործարան: արտադրողական ուժանվորված ծրագրում Ինչպես տեսնում ենք մետալուրգիան և թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտադրությունը այն ճյուղերն են, որոնց գծով մեր երկիրը կարողանում է կազմակերպել արդյունավետ արտահանում: Փաստորեն, այս ճյուղերի գործարանների վերագործարկումը նախկին հզորություններով հնարավորություն կտա բազմապատկել ձեռք բերված հաջողությունները: հատկապես գունավոր մետալուրգիան այն ոլորտն է, որում Հայաստանը մասնագիտացել է վերջին տասնամյակների ընթացքում և չնայած մետալուրգիական հզոր ձեռնարկությունների թերթեղնվածությանը՝ շարունակվում է այս ոլորտի թողարկած արտադրանքի արտահանումը դրական հաշվեկշռով: Հետևաբար, հատկապես այս ճյուղի արագ զարգացումը կարող է մեր հանրապետության համար դառնալ այն նյութական բազան, որի հիման վրա կարելի է զարգացնել մյուս ճյուղերը: Ամենայն հավանականությամբ, հիմնական ներդրումները պետք է կատարվեն այն ոլորտներում, որոնց գծով արդեն իսկ Հայաստանը հասել է որոշակի հաջողությունների և առկա է արտադրական բազան: Վերը նշված առավելությունները արդյունավետորեն համատեղելով արտաքին ներդրումների հետ Հայաստանը հնարավորություն կստանա վերամասնագիտանալ այն հիմնական արտադրատեսակների գծով, որոնցով մասնագիտացած է եղել ԽՍՀՄ ժամանակաշրջանում. հաստոցաշինության, սարքաշինության, կաուչուկ և ռետինատեխնիկական իրեր, կոշիկեղեն և այլն: Ինչ վերաբերվում է գյուղատնտեսությանը, ապա, չնայած այն բանին, որ գյուղատնտեսությունը համարվում է ցանկացած տնտեսության ամենա իներտ

ուղորդը և դժվարությամբ է բարեփոխվում, Հայաստանում այս ուղորտում տեղի է ունենում առավել արագ տեղաշարժ, քան մյուս ուղորտներում: Ներկա պահին տարբեր միջազգային կազմակերպություններ (ԵՆ Պարենային Ապահովության Ծրագիր, Միջազգային Հիմնադրամ Գյուղատնտեսության Ջարգացմանը և այլն) մեծ ներդրումներ են կատարում այս ուղորտում և խթանում են Հայաստանի գյուղատնտեսության զարգացմանը: Միանշանակ կարելի է ասել, որ այս ուղորտը միակն է, որը վերջին տարիներին ապահովում է կայուն աճ: Սակայն Հայաստանը երբեք չի համարվել գյուղատնտեսական երկիր, և լավագույն դեպքում, արդյունավետ աշխատող գյուղատնտեսությունը կարող է բավարարել մեր պահանջմունքների մի մասը միայն: Գյուղատնտեսությունը ամբողջությամբ չի կարող համարվել համեմատական առավելություն: Վիճակագրական տվյալները ապացուցում են դա. չնայած գյուղատնտեսական արտադրանքի ծավալների աճին, ՀՀ առևտրային հաշվեկշռում այս ուղորտի բացասական հաշվեկշիռը ամենամեծն է: Սակայն, համաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ գյուղատնտեսության զարգացումը ցանկացած բարեփոխումների և տնտեսական առաջընթացի կարևորագույն գրավականն է:

Այսպիսով, տնտեսական առաջընթացի գրավականը, երկրի համեմատական առավելությունների միշտ գնահատումն է և նրանց պատշաճ ուշադրություն դարձնելը: Առաջ քաշված մեթոդը հնարավորություն են ստեղծում միշտ գնահատել երկրի տեղը աշխատանքի միջազգային բաժանման ներկա համակարգում և իրականացնել կոմպլեքս միջոցառումներ տնտեսական առաջընթաց և բարձր կենսամակարդակ ապահովելու համար:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԽԱԶԱՏՐՅԱԼ

ՀԱՄԱՍՏԵՂԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ¹

Ազգակ (Բեյրութ)

«Հայ հին բանաստեղծութիւնը» 1959, 25.07

Ալլու (Բեյրութ)

«Էնը» 1949, թիվ 3

«Ն.Աղբալեան - Յ.Օշական» 1950, թիվ 5

«Խալիլ ժիպրան» (կենսագրեց և թարգմանեց Համաստեղ) 1951, թիվ 5

«Սպիտակ Չիաուրը» (հատված երկրորդ գրքից) 1953, թիվ 11-12

«Աղօթամատենան» 1956, թիվ 2

«Մ. Իշխանի «Հացի եւ սիրոյ համար» վեպի մասին» 1957, թիվ 1

«Երբ կը սիրենք» 1957, թիվ 2

«Աղօթարան» 1957, թիվ 6

Ամենուն Տարեգոյց (Կ. Պոլիս)

«Սիմօն ու Կիրօն» 1926

«Երբ այն օրերուն երախայ էիր» 1927

«Կապոյտ հուլունքը» 1928

Ամենուն Տարեգիրքը (Բեյրութ)

«Փոքրիկ Հոպսիտը» 1955

«Ամեն Անգամ, որ կերթամ ծանօթի մը դագաղին» 1963

«Այ, մտերիմ թիթեռնիկ» 1963

Ամերիկահայ Հանրագիտակ (Բոստոն)

«Թոնին եւ Հալլէի գիսաւորը» 1925

Ասպարեզ (Լոս Անջելես)

«Ժողովուրդը եւ գրականութիւնը» 1966, 13.12

Ավանգարդ (Երևան)

«Հավատք քո կեցուսքն զքեզ» 1990, 25.03

Բազին (Բեյրութ)

«Հայու ոգին» 1962, թիվ 1

«Հարոն ու Կարոն» 1963, թիվ 10

«Սայաթ-Նովայի 250-ամեակին առիթով» 1964, թիվ 1

«Յաւիտենական ճամբորդը» 1965, թիվ 4-5

«Յակոբ Օշական» 1966, թիվ 1

«Զրոյց շունի մը հետ» թիվ 1

«Այծետոմար» (հատված) թիվ 4

«Ա. Ահարոնեան» թիվ 8-9

«1600-ամեակը» թիվ 12

«Համբոյրը» (թատերգութեան վերածեց Բ. Փափազեան) 1974, թիվ 1 - 2

«Աղաւնիները» (թատերգութեան վերածեց Բ. Փափազեան) թիվ 4

«Մայր իմ անուշ» (մայրերին նվիրված թիվ՝ մայրերի նկարներով) 1975, թիվ 5

«Համաստեղի նամակը Կ. Սասունիին» (07.08.1950) 1983, թիվ 8

Գեղունի (Վենետիկ)

«Պանն էր անցեր իմ պարտզէն» 1947

Էջմիածին (Էջմիածին)

«Հաւատք քո կեցուսքն զքեզ» 1965, թիվ 2-4

«Համազգայինի» Տառեզիոր (Բեյրութ)

«Տոմար մաքիական» 1936

«Խալիլ ճիպրան» (կենսագրեց եւ թարգմանեց Համաստեղ) 1952

«Համաստեղ ինք իր մասին» 1953

Հայաստանի Կոչնակ (Նյու Յորք)

«Նկարներ» 1921, թիվ 1

«Իգնատիոսը» (փոխան ծաղկեպսակի) 1946, թիվ 10 (Օհան Ծովեցի)

«Տիկիներ եւ Պարոններ ...» 1947, թիվ 10 (Օհան Ծովեցի)

«Զննադատը» 1948, թիվ 42 (Օհան Ծովեցի)

«Եղիա Գասպարեանի շուրջ» 1949, թիվ 6

«Արգաւանդ Ակօսներ» թիվ 40

«Սխալ չկար» 1950, թիվ 42 (Օհան Ծովեցի)

«Մարգարեն» (թարգմ. Խալիլ ճիպրանից - թարգմ. Օհան) 1952, թիվ 17

«Կոչնակի շուրջ» 1954, թիվ 31

«Կը հաւատամ» 1955, թիվ 41(7)

«Վկայութիւն մը Յովհաննէս Աւագեանի յորելեանի առթիվ» 1956, թիվ 23

«Նամակ «Հատընտիր Պատմութեան»-ու շուրջ» 1957, թիվ 26

«Վկայութիւն մը բանաստեղծ Մինաս Նուրիի «Արեւորդի»-ի մասին» 1958, թիվ 19

Հայրենիք (ամսագիր) (Բոստոն)

«Չալօն» 1922, թիվ 1

«Վարդանը» թիվ 2, 1923, թիվ 3-4

«Միջօն» 1923, թիվ 4

«Երնէկ այն օրերուն» 1923 թիվ 7

«Փիլիկ Աղբար» թիվ 9

«Թափառաշրջիկի մը օրագրէն» 1924, թիվ 1

«Պուպրիկը» թիվ 3

«Աղջի Եղսիկ» թիվ 6

«Անծրը» թիվ 9

«Համբոյրը» 1925, թիվ 5

«Սպիտակ լեռներու մէջ» թիվ 2

«Նիւ Եորքի մէջ» թիվ 8

«Վերադարձ» 1926, թիվ 1

«Չամչով կարկանդակ» թիվ 6

«Մակարի տղան Մարգարը» 1927, թիվ 1

«Զրոյց շունի մը հետ» թիվ 6

«Յէքեթի մատանին» թիվ 9

«Գաւառը և Թլկատինցի» թիվ 6-7

«Կորին Մկրտիչեան» 1929, թիվ 4

«Սպիտակ Չիաւորը» 1931- 1933, թվերը

«Արբազան կատակերգոյթուն կամ Տոմար մաքիական» 1938, թիվ 4-9

«Հայրս» 1939, թիվ 2

- «Շրջանը և Բաֆֆին» թիվ 3
- «Յոյսն անստոյգ գալիքին» թիվ 4
- «Ապասում» (պատմվածք) թիվ 11
- «Հրեայ բարեկամս» 1940, թիվ 5
- «Քաջն Նազար» թիվ 9
- «Յուզատախտակը» 1941, թիվ 6
- «Մայր իմ անուշ» թիվ 6
- «Գիտեմ օր մը պիտի մեռնիմ» թիվ 7
- «Զրիստոսի երկրորդ գալուստը» 1942, թիվ 3-6
- «Եթե» 1944, թիվ 3
- «Հայաստանի լեռներու սրնգահարը» թիվ 6
- «Հին հեքեպո» 1945, թիվ 5
- «Երանոս աղբարը» 1946, թիվ 3
- «Աստուածամոր արցունքները» թիվ 4
- «Նիկոլ Աղբալեան» 1948, թիվ 1
- «Լուքսա աղբարը եւ աղավնին» թիվ 4
- «Ա.Ահարոնեանի մահուան առթիւ» թիվ 7
- «Երբ իրիկունն էր մեր գիւղին» թիվ 8
- «Եղիա Գասպարեան» 1949, թիվ 2
- «Ն.Աղբալեանի եւ Յ. Օշականի մասին» թիվ 12
- «Ապիտակ Չիաւորը» «Հաճի Մուսան» (հատված վեպից) 1950, թիվ 4
- «Կ.Սասունիի «Գրական գոհարներ» գրքին առիթով» 1951, թիվ 3
- «Աղօթարան» 1956, թիվ 1-3,5
- «Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ» (Մեսրոպ Մաշտոց Եղեսիա կը ճամբուի) 1962, 7-8

- «Կարապի երգ ... Համաստեղի վերջին խօսքը» 1969, թիվ 8
- Հայրենիք** (տարեգիրք- տօնացոյց) (Բոստոն)
- «Ապասում» (բանաստեղծություն) 1943
- «Հոգւոյս մէջ յոյսը վաղվուան» 1943
- Քառերկեր 1943
- «Փոքրիկ բանաստեղծը» 1944

- «Ես կը ճանչնամ քեզ» 1945
- «Կարմրալանջը» 1946
- «Իրիկնամուտ» 1947
- «Առաջին Ծիլը» 1948
- Հայրենիք** (օրաթերթ) (Բոստոն)
- «Երթանք մեհեանն հաւատքին» 1917, 10.11
- «Երեք քահերը բոսոր» 24.11
- «Ստուերներ» 15.12
- «Ստուերներ» 1918, 09.02
- «Վերջալոյսի ներքեւ» 13.04
- «Հեթանոս պատարագ» 1920, (բացառիկ թիվ 3)
- «Խելագարի մը թուպայաթը» 22.05 (թիվ 2452)
- «Խելագարի մը թուպայաթը» 05.06 (թիվ 2463)
- «Խելագարի մը թուպայաթը» 18.06 (թիվ 2474)
- «Խելագարի մը թուպայաթը» 18.06 (թիվ 2475)
- «Խելագարի մը թուպայաթը» 03.07 (թիվ 2487)
- «Խելագարի մը թուպայաթը» 07.07 (թիվ 2498)
- «Խելագարի մը թուպայաթը» 31.07 (թիվ 2510)
- «Խելագարի մը թուպայաթը» 07.08 (թիվ 2516)
- «Խելագարի մը թուպայաթը» 10.10 (թիվ 2570)
- «Շէն գիւղի հին օրերէն» 1921, 19.03
- «Վերադարձ» (հատված) 1926, 21.10(4400)
- «Մեծ Եղեռնէն յետոյ» 1927, 28.04 (4558)
- «Հայկական ամսագիրը»
- (Կարծիքներ «Հայրենիք»ներու մասին) 06.11 (4718)

- Համաստեղի ելույթը Երուսաղեմում Անկախության օրվա առթիվ 1929, 03.07 (թիվ 5220)
- «Մենք չենք մոռնար» 1955, 23.04 (Օհան Ծոփեցի)
- «Շաւարշը» 1957, 16.03
- «Բարեկամութեան դէսպանները» (թարգմ. Սրբուհի Համաստեղը) 1960, 18.03

- «Եղիշէ Դուրեան» 10.05
 «Րաֆֆի» 07.06 - 08.06
 «Սողոմոն Թեղեբեանի մահուան առիթով» 12.06
 «Մաննիկ Պէրպլեբեան» 03.12 (14778)
 «Չայու ոգին» (նուր Սրբուհի Չամաստեղին) 1962, 07.01 (15109)
 «Մալխաս» 27.01
 «Ինչպէ՛ն կը մեռնին, ինչու՛ կը մեռնին...» 01.12 (15383)
 «Գուրգէնի մահուան քառասունքը» 1963, 13.01
 «Ոսկան Երևանցի» 07.04 - 11.04 (Օհան Ծովեցի)
 «Տարիներ առաջ» 12.05 (Օհան Ծովեցի)
 «Չաւատաւորը» 13.09
 «Սա «Չարուրտ Չեր»ը» 10.09 (Օհան Ծովեցի)
 «Տարիներ առաջ» 12.05 (Օհան Ծովեցի)
 «Ժամադրութիւն մը» (Վարդգէսի մահուան առթիւ) 1965, 28.02
 «Գանկի մը հետ» 22.04
 «Չաւատք քո կեցուցեն զքեզ» 30.05
 «Յուշեր՝ Արամ Պետրոյեանի մահուան առիթով» 24.08
 «Չամաստեղ կը սգայ կորուստը Մ. Օզանեանի մահուան քառասունքի առիթով» 23.11
 «Տրդատ Գազանճեան» 1966, 26.08
 «Եղիա Երուանդ Մելքեան (Մահուան առթիւ)» 08.11
 «Յոյսն անստոյգ գալիքին» 1967, 13.01
 «Գիտեմ, օր մը պիտի մեռնեմ» 13.01
 «Մեծ կորուստը» (Չրանդ Ռուսեան) 27.01
 «Չամաստեղ՝ Ռ. Դարբինեանի մասին» 1968, 16.06

Միջնաբերդ (Բեյրութ)

- Չամաստեղի պատասխանները հարցարանին 1957
 «Բանաստեղծութիւնը» 1959
Յառաջ (Փարիզ)
 «Չէքեաթի մատանին» 1927, 24.07

- «Էս աշխարհը կը փլի» 1928, 29.09-02.10
Յեղափոխական Ալբոմ (Բեյրութ)
 «Գանկի մը հետ» 1967, թիվ 3-4
 «Չաւատաւորը» 1967, թիվ 3-4
Յուսաբեր (Կահիրե)
 «Չոպան Լեռան Չէքեաթը» 1925, 03.01
 «Չամաստեղի ճառը» (Արտասանուած Ջակազիկի գրական երեկոյթին) 1929, թիվ 29-30, 35
 «Չամաստեղի խօսքերից» 1929, թիվ 40
 «Անսովոր կինը» 1929, թիվ 154-164
 Գրական երեկոյթի պատիւ Չամաստեղի 1929, թիվ 298-302
 «Չաւատաւորը՝ Վահան Նաւասարդեան» 1957
 Չամաստեղին նվիրված հորեյանական թիվ 1966, (21.05)
 «Չամաստեղ կը խօսի» (1929-ի ելույթն է Կահիրեում) 1967, թիվ 201
 «Չամաստեղ ինք իր մասին» (Գրելու ձեւն ու արուեստը) 1967, թիվ 213
Նայիրի (Բեյրութ)
 «Նկարներ» (Չուհնք, Լռութիւն, Ջրտուք) 1941, պրակ Ա
 «Լեվոն Շանթ» 1956, թիվ 10 և 11
 «Գրիգոր Ջօիրապ» 1961, թիվ 29:
Նավասարդ (Բոստոն)
 «Կանանչ աչքերով աղջիկը» 1922, թիվ 2
Նորք (Երևան)
 «Սերը» (Ժճ գլուխ) 1989, թիվ 4
 «Աղոթարան» թիվ 7
Ջանասէր (Բեյրութ)
 «Առ Բարձրեալն» 1962, թիվ 24
 «Առ Աստված» 1963, թիվ 17-18
 «Միջօ» 1964, թիվ 15
Սովետական Չայաստան (Երևան)
 «Չայր» 1966, թիվ 6
 Սփյուռքահայ նամականի թիվ 8

Փիւնիկ (Բոստոն)

- «Ստուերներ» 1918 թիվ 1, էջ 61
- «Չարչարուած մերկութիւններ» էջ 176
- «Օձվու տեսիլներ» թիվ 5, էջ 308
- «Եօթը իշխանուհիները» (Մօրիս Մետրոլինկ- անգլ.թարգմ. Զամաստեղը) էջ 378-384, 403-407
- «Թափօրը» թիվ 6-7-9
- «Գերեզմանին վրայ» էջ 528
- «Սպիտակ գիշերներ» թիվ 8-10, էջ 599
- «Դիւահարը» թիվ 11, էջ 663-664
- «AVE MARIA» թիվ 12, էջ 731-732
- «Անօթիները» 1919 թիվ 1, էջ 815
- «Փարոսը» թիվ 3, էջ 954-956
- «Գերեզմանափորները» թիվ 4, էջ 997-1002
- «Նկարներ» թիվ 8, էջ 1308-1309
- «Ան կատուն» թիվ 11, էջ 1430-1431
- «Նկարներ» թիվ 6-7, էջ 1166
- «Անօթիները» թիվ 1, էջ 815
- «Մահուան տեսիլներ» 1920 թիվ 1, էջ 1524-1525
- «Վերջալոյսին հետ» թիվ 3, էջ 1670-1672
- «Անծանօթ տաճարը» թիվ 4, էջ 1717-1719
- «Խելագարի մը ռուպայեթը» էջ 1692-1693,
- «Խելագարի մը ռուպայեթը» էջ 1760

ՀԱՄԱՍՏԵՂԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ

- Ազգ (Երևան)**
1996, 23.01 «Հայրենիքում չգնահատված տաղանդավոր գրողը՝ Զամաստեղ» (Գ. Էմին)
- Ալիք (Թեհրան)**
1966, 12.03-13.03 Համաստեղ մեր գիւղէն է (Ա. Պուլուզեան)
19.04-21.04 «Համաստեղ» (Եղ. Պոյաճեան)
1967, 14.01 Համաստեղին նվիրված թիվ
19.01 «Յարգանքի երեկոյ նուիրած Համաստեղի 50ամեայ գրական գործունէութեան»
19.01 «Ավա՛ղ» (Արամ Գառօնէ)
«Համաստեղի յիշատակին համաժողովրդական յարգանքի հանդէս Տիբրոյթի մէջ» (22.01.1967)
«Զեկոյց-կոչ՝ Ուղղած բոլորին, ամէն տեղ»։ «Մեռաւ Զամաստեղ» (Կեդր. Յանձնախմբի կողմէն է)
02.03 «Թեհլերեան և Համաստեղ» (Պ. Ս.)
1990, 17.01 - 21.01 «Համաստեղի տունը» (Աղ. Յովհաննիսեան)
- Ալյօս (Բեյրութ)**
1951, թիվ 1 «Համաստեղ» (գրեց՝ Լեւոն Գարմէն)
1953, թիվ 7 «Նայիրի»ի դասախոսությունը Համաստեղի մասին
1957, թիվ 9 «Սրբազան կատակերգութիւն, Տոմար Մաքիական Համաստեղի» (Ն. Աղբալյան)
1958, թիվ 2 «Համաստեղի մասին՝ «Աղօթարան»ի առիթով» (Գր. Շահինյան)
1960, թիվ 1-12 «Համաստեղեան տիպարներ» (Գր. Շահինյան)
- Աիւնկան 67 (Գարուն) (Բեյրութ)**
«Առաջին Սէրը, վերջին կորոս» (Գ. Շ.)
- Ամէնուն-Տարեգիտքը (Բեյրութ)**
«Շոփաց աշխարհը իր դէմքերով» (Ալէք Փիլիպոս)

Այլ (Բեյրութ)

1958, 26.01 «Աղօթարան»ի Համաստեղը» (Գր. Շահինեան)

Ասաստեղ (Լոս Անջելես)

- 1947, 02.05 «Ճաշասեղան ի պատիւ Համաստեղի»
- 18.09 «Ես տեսայ Համաստեղը» (Յ. Կարապետեան)
- 1966, 01.12 «Համաստեղի յիշատակին» (Վ. Ասլանեան)
- 09.12 «Համաստեղ» (Թ. Փօսթանեան)
- 13.12 «Համաստեղի հուսկ բանին» (Ալէք Փիլիպոս)
- 1967, 10.01 «Համաստեղ» (Ջ. Կապանեան)
- 03.02 «Համաստեղի մահուան քառասնօրեակը. ոգեկոչում յիշատակի» (Ս. Սարունի)

Արահետ (Փարիզ)

1977, թիվ 2 «Համաստեղ եւ Գիւղը» (Ծ. Պերպէրեան)

Արեգակ (Լոնդոն)

1966, թիվ 24 «Յիսնամեակ Համաստեղի գրական գործունեութեան»

Արմենիա (Բուենոս Այրես)

1966 01.07 Համաստեղին նվիրված թիվ

Արվեստ, գրականություն, գիտություն («Պրովետար»-ի հավելված) (Թիֆլիս)

1928, թիվ 7 (12.02) «Համաստեղ, «Գիւղը»» (Յ. Յովակիմյան)

Բագին (Բեյրութ)

- 1962, թիվ 1 (Ա տարի) «Զրոյց հայ գրականութեան մասին» Գ. Մխիթարեան
- թիվ 6 «Համաստեղ» (Ե. Պ.)
- 1966, թիվ 1 Համաստեղին նվիրված թիվ
 - թիվ 3 «Յիսնամեակ Համաստեղի գրական գործունեութեան»
 - թիվ 4 «Համաստեղ, «Այծետոմար եւ ուրիշ բանաստեղծութիւններ»
 - («Բագին»ի գրական զրոյցներն)
 - թիվ 7 «Համաստեղի հետ» (Բ. Նուրիկեան)
 - թիվ 12 «Մատենախօսութիւն. Համաստեղ, «Գիւղը»» (Պ. Անանուն)
- 1981, թիվ 7 «Ամերիկահայ գրականութեան 1960- 84 շրջանի էստարբերու հարցեր» (Վ. Թեքեան)
- 1982, թիվ 11 «Համաստեղ և Թոթովենց» (Յ. Պերպէրեան)

1987, թիվ 4 Համաստեղին նվիրված թիվ (մահուան 20-ամեակը)

1997, «Համաստեղի Տեր-Զօրեան այցելութիւնը» (Տոքոս. Ս. Սիսեռեան)

Բագմավայ (Վենետիկ)

- 1966, թիվ 1 - 3 «Համաստեղի գրական գործունեութեան յիսնամեակը»
- 1966, թիվ 11 - 12 «Համաստեղի «Գիւղին» մէջ եւ «Անձրեւին» տակ» (Յ. Ռափայել Անտոնեան)
- թիվ 11 - 12, «Համաստեղ եւ իր գործը» (Յ. Մեսրոպ ճանաչեան)
- 1967, թիվ 1 - 2 «Համաստեղ եւ իր գործը» (Յ. Մեսրոպ ճանաչեան)

Գլածող (Անթիլիաս)

1966 - 1967 «Համաստեղի կեանքը եւ գործը» (Կարպիս սրկ.

Մխիթարեան)

«Համաստեղի արուեստը» (Մինաս սրկ. Ազնաւորեան)

Գրական քեռք (Երևան)

- 1966, 12.08 «Մեր գրականության անբաժան մասը» (Ստ. Կուրտիկյան)
- 02.12 «Համաստեղ» (Գ. Էմին)
- 1981, 29.05 Համաստեղին նվիրված երկեր
- 1990, 16.05 «Համաստեղի միհատորյակը» (Ա. Եղիազարյան)

Երեկոյան Երևան (Երևան)

1989, 06.11 «Համաստեղը «վերադարձավ» հայրենիք»

Երիտասարդ Հայուհի (Բեյրութ)

1966, թիվ 12 «Համաստեղ» (Սեզա)

Զուարթնոց (Փարիզ)

1929 թիվ 6 «Համաստեղ, «Անձրեւը»» (Յ. Բալունեան)

Էքմիածին (Էքմիածին)

- 1959, թիվ 4 «Համաստեղ, «Աղօթարան»»
- 1966, թիվ 5 «Ողջոյն Համաստեղին»

Հայկական Հայագիտական Հանդէս (Բեյրութ)

1979, հ. է «Գոյնի եւ ձայնի զգացողութիւնը Համաստեղի պատմութեանը մէջ» (Ա. Գապպենճեան)

Հայ րնտանիք (Վենետիկ)

1969 «Գաւառական գրականութիւնը եւ Համաստեղ» (Յ. Ս. Վ. ճանաչեան)

Հայաստանի Կոչնակ (Նյու Յորք)

1924, թիվ 49 «Գիւղը» (Յ. Աւագեան)

1939, թիվ 31 «Անձրևը» (Յ. Աւագեան)

1954, թիվ 13-14 «Սպիտակ Չիաւորը» (Յ. Աւագեան)

Հայաստանի Հանրապետություն (Երևան)

1995, 03.11 «Համաստեղի գրական ուղղութեան հարցի շուրջ» (Ս. Դանիելեան)

Հայոց լեզու և գրականությունը դպրոցում (Մայրենի) (Երևան)

1989, թիվ 6 «Համաստեղի «Քաջն Նագարը»» (Վ. Սարգսյան)

1992, թիվ 1 - 2 «Համաստեղ» (Ս. Դանիելեան)

Հայրենիք (տարեգիրք) (Բոստոն)

1946 «Համապտեղ» (գրեց՝ Ս. Ա.)

Հայրենիք (ամսագիր) (Բոստոն)

1938, թիվ 3 «Համաստեղը» (Վ. Սոֆեան)

1961, թիվ 5 «Համաստեղը և իր աշխարհը» (Գր. Շահինեան)

1966, թիվ 3 «Յիսնամեակ Համաստեղի գրական գործունեութեան»

1969, թիվ 8 «Համաստեղի վերջին խօսքը՝ Լոս Անճելէսի մէջ»

Հայրենիք (օրաթերթ) (Բոստոն)

1924, 07.09 «Գիւղը» (Մ. Պարսամեան)

31.07 «Հայ գիւղի երգիչը» (Վ. Ահարոնեան)

1925, 27.01 - 03.02 «Հայրենիք» ամսագիրը» (Մ. Պարսամեան)

09.01 «Տեսակցութիւն մը» (Վ. Շուշանեան)

15.09 - 24.09 «Համաստեղ» (Օ. Մխիթարյան)

1927, 01.01 «Հայ գրականութեան արդի ձգտումները» (Սկրտիչ Պարսամեան)

14.01 «Համաստեղը» (Կ. Սասունի)

10.11-11.11 «Հինգ տարի»» (Յովհաննէս Աւագեան)

1929, 30.06 «Անկախութեան տօնը Երուսաղէմի մէջ» («Բանախօսած են ընկերներ Համաստեղ եւ Վ. Նաւասարդեան»)

03.07 «Անկախութեան տարեդարձի առթիվ» (Համաստեղի ելույթը Երուսաղէմում)

10.07 «Համաստեղի «Անձրև»ը» (Ա. Չօպանեան)

1930 06.12 Հայտարարություն «Հայրենիք» ամսագրի առաջիկա թվերում Համաստեղի «մէծ մեծ վեպը» հրատարակելու մասին

1931, 15.03 «Հարիւր հատոր «Հայրենիք» (Կ. Սասունի)

30.05 «Հայրենիք» ամսագրի մայիսի թիւը» (Ա. Խոնդկարյան)

30.06 «Հայրենիք» ամսագրի յունիսի թիւը» (Ա. Խոնդկարյան)

29.07 «Հայրենիք» ամսագրի յուլիսի թիւը» (Ա. Խոնդկարյան)

28.08 «Հայրենիք» ամսագրի օգոստոսի թիւը» (Ա. Խոնդկարյան)

01.10 «Հայրենիք» ամսագրի սեպտեմբերի թիւը» (Ա. Խոնդկարյան)

03.11 «Հայրենիք» ամսագրի հոկտեմբերի թիւը» (Ա. Խոնդկարյան)

09.12 «Հայրենիք» ամսագրի 10-րդ տարուան առաջին թիւը» (1931, նոյեմբեր) (Ա. Խոնդկարյան)

30.12 «Համաստեղի «Սպիտակ Չիաւորը» (Ատրպատականի առաջնորդ Գեր. Ներսէս Արք. Մելիքբանդեան)

1932 06.01 «Հայրենիք» ամսագրի դեկտեմբերի թիւը» (Ա. Խոնդկարյան)

30.01 «Հայրենիք» ամսագիրը» (Վ. Հուրեան)

04.02 «Հայրենիք» ամսագրի յունուարի թիւը» (Ա. Խոնդկարյան)

27.02 «Հայրենիք» ամսագրի փետրուարի թիւը» (Ա. Խոնդկարյան)

17.02 «Համաստեղ ու «Հայրենիք» ամսագիր» (Կ. Թանտրճեան)

06.05 «Հայրենիք» ամսագրի ապրիլի թիւը» (Ա. Խոնդկարյան)

28.05 «Համաստեղի գրականութեան մասին»

04.06 «Հայրենիք» ամսագրի մայիսի թիւը» (Ա. Խոնդկարյան)

03.07 «Հայրենիք» ամսագրի յունիսի թիւը» (Ա. Խոնդկարեան)

07.08 «Հայրենիք» ամսագրի յուլիսի թիւը» (Ա. Խոնդկարեան)

«Հայրենիք» ամսագրի օգոստոսի թիւը» (Ա. Խոնդկարեան)

«Հայրենիք» ամսագրի հոկտեմբերի թիւը» (Ա. Խոնդկարեան)

1933 04.03 «Հայրենիք» ամսագրի փետրուարի թիւը» (Ա. Խոնդկարյան)

02.04 «Հայրենիք» ամսագրի մարտի թիւը» (Ա. Խոնդկարյան)

05.05 «Հայրենիք» ամսագրի ապրիլի թիւը» (Ա. Խոնդկարյան)

06.10 «Հայրենիք» ամսագրի սեպտեմբերի թիւը» (Ա. Խոնդկարյան)

«Հայրենիք» ամսագրի հոկտեմբերի թիւը» (Ա. Խոնդկարյան)

- 1960 24.05 «Համաստեղ» (Միւնիխի «Ազատագրութիւն» ռադիօկայանէն)
- 09.09 «Համաստեղի «Սպիտակ Չիւտր»ը» (Ս. Սահառունի)
- 1962, 07.03 «Հայրենիք» ամսագրի քառասնամեայ փառքը» (Եղ. Պոյաճեան)
- «Գիրքերու հետ. Գր. Շահինեան, «Համաստեղ» (Արամ Հայկազ)
- «Գիրքերու հետ. Գր. Շահինեան, «Հատընտիր» (Արամ Հայկազ)
- 1963, 27.01- «Թատերական ներկայացման մը առիթով» («Հայաստանի լեռներու սրնգահարը») (Ղ. Մերկեան)
- 12.07- «Համաստեղ» (Ս. Սահառունի)
- 1964, 27.02- «Համաստեղի մասին»
- 1965 01.10 - 02.10 «Փէրչենճի ոսկեհունչ սրնգահարը» (Յ. Կարապետ)
- 1966 31.01- «Պատարագ» (Համաստեղի յիշատակին) (Լ. Սրապեան Հերըտ)
- 14.05- «Համաստեղի «Այծետոմար»ը եւ ուրիշ բանաստեղծութիւններ» (Պ.Սնապեան)
- 26.07- «Իր յոբելեանին առթիւ» (Կարծիքներ Համաստեղի մասին)
- 06.08- «Ողջոյն Համաստեղին» («Էջմիածին», 1966, մայիս -11.03. 1966)
- 11.08- «Փունջ մը ծաղիկ՝ Համաստեղին» («Այգ»-ից) (Շահանդուխտ)
- 12.08 - 16.08 «Հայ գիւղի անճաման սրնգահարը» (Ա. Ալիքեան)
- 13.08 - 14.08 «Թրքական» օղին», «Համաստեղի տունը» (Վ. Վալադեան)
- 20.08- «Ստ. Կուրտիկյանը Համաստեղի և Արամ Հայկազի մասին»
- 11.09 - «Համաստեղի յոբելեանին առթիւ» (Սար.Սահակեան)
- 15.09 - «Համաստեղի գրական գործունեութեան 50-ամեայ յոբելեանը Պուլտոս Այրտի մէջ»
- 16.10- «Համաստեղ» (Մ. Պօղոսեան)
- 01.11- «Ուաշինկթընի հայ համայնքը տօնեց Համաստեղի յոբելեանը եւ տուաւ իր նուէրը, հեղինակին հին ու նոր գործերուն հրատարակութեան համար»
- 08.11 «Համաստեղի յոբելեանը Ուաշինկթընի մէջ» (Առանձար)
- 16.11 «Համաստեղը» (իր յոբելեանին առթիւ) (Ռ. Դարբինեան)
- 17.11 «Համաստեղի յիսնամեայ յոբելեանը» (Բ. Կռանեան)
- 29.11 «Համաստեղ» (մահազդ)
- 30.11 «Համաստեղ» (կենսագրական համառօտ տեղեկութիւններ)

- 01.12 «Անճահական Համաստեղը» . «Համաստեղի թաղումը»
- 03.12 «Յարգենք Համաստեղի յիշատակը»
- «Այց Մոնթրէալի մեր գաղութին» (Արամ Հայկազ)
- «Վերջին 36 ժամը Համաստեղի հետ» (Բիւզանդ Կռանեան)
- 07.12 Մոնթրէալի հայութիւնը տօնեց Համաստեղի գրական գործունեութեան 50-ամեայ յոբելեանը (Վրէժ-Արմէն)
- «Գերեզման Համաստեղի» (Արսէն Երկաթ)
- 11.12 «Վերջին յարգանքը» (Ս. Սարունի)
- 16.12 «Համաստեղ» (Յակոբ Մաննիկեան)
- «Համաստեղին» (Լաթօ)
- 18.12 «Համաստեղ» («Հայրենիքի ծայն»-ից՝ 04.12.1966) (Գ. Մահարի)
- «Համաստեղ» (Լեւոն Քէչիշեան)
- 07.12 «Մոնթրէալի հայութիւնը տօնեց Համաստեղի գրական գործունեութեան 50ամեայ յոբելեանը» (Վրէժ-Արմէն)
- «Համաստեղ» (Թորգոմ Փօսթանեան)
- «Գերեզման Համաստեղի» (Արսէն Երկաթ)
- 09.12 «Ահա Կաղնին Շանթահար» (Ս. Սարունի)
- ՀՕՄ-ի Հանգանակութիւնը՝ Համաստեղի հիշատակին «սան մը պահելու համար»
- 11.12 «Վերջին յարգանքը» (Ս. Սարունի)
- «Համաստեղի յիշատակին» (Վիգորիա Ասլանեան)
- «Համաստեղն ալ շանթահար ինկաւ Սուրբ Մեսրոպ բառը շրթունքին վրայ» (Գ. Մելիտինցի)
- «Համաստեղի քաղցր յիշատակին» (Գրիգոր Պետրոսեան)
- 13.01 Համաստեղին նվիրված թիվ
- 13.01 - 15.01 «Իր կոչումին տէր գրողը» (Սուրեն Մանինեան)
- 13.01 - 15.01 «Հայ գիւղի անճաման սրնգահարը» (Ա. Ալիքեան)
- 14.01 «Համաստեղի յիշատակին» (Վիգորիա Ասլանեան)
- «Համաստեղ» (Մ. Նուրեան)
- 17.01 «Համաստեղ եւ իր գրականութիւնը» (Արամ Հայկազ)
- «Վաստակաւոր գրագետը՝ Համաստեղ» (Եղ. Սիմքէշեան)

- 24.01 «Անմոռանալի» (Վրեժ Արմեն)
- 08.02 «Համաստեղի մահուան քառասունքը» (Ոգեկոչում յիշատակի)
- 10.02 «Համաստեղի 50-ամեայ յոբելեանը Աթենքի մեջ»
- 17.02 - 18.02 «Յարգանքի երեկոյ նուիրում Համաստեղի յիսնամեայ գրական գործունէութեան»
- «Տիրորոյի յարգեց Համաստեղի յիշատակը» (Ե. Բամառ
«Համազգային մեծարանք Համաստեղի»
- 01.03 «Համաստեղի «Առաջին Սէրը» » (Արշակ Սահակեան)
- 11.03 « «Առաջին Սէրը» հատորին առթիւ» (Գիսաւոր)
«Համաստեղ եւ «Առաջին Սէրը» » (Ա. Արփիմէ)
- 17.01 Համաստեղին նվիրված թիվ
- 16.08 «Գիր եւ գրականութիւն» (Գառնիկ Գալստեան)
- Հայրենիքի ծայր** (Երևան)
- 1966, 04.12 Համաստեղ (Գ. Մահարի)
- 1989, 24.05 «Հայրենիքի անմեռ ոգին» (Դ. Գասպարյան)
- Արածառ** (Պոլիս)
- 1963, 12.12 - 26.12 «Համաստեղ» (Ռ. Հատտեճեան)
- 1964, 16.01 «Համաստեղ» (Գ հատված) (Ռ. Հատտեճեան)
- 1966, 17.04 «Գովք Համաստեղին» (Աստղիկ Քեհեաեան)
- 18.04 «Համաստեղի յոբելեանը Պոլսում» (17.04.1966)
- 12.10 «Համաստեղի յոբելեանին առթիւ» (Սար. Սահակեան)
- 1967, 25.12 «Մեզի հետ էր Համաստեղ» (Արամ Աֆարեան)
- Միջնաբերդ** (գրական տարեգիրք) (Բեյրութ)
- 1959 (Բ տարի) «Աղօթարան» (Ե.Պ.)
- Յառաջ** (Փարիզ)
- 1926 05.08 «Ի պատիւ Համաստեղի» (հայտարարությունն է)
- 1927, 26.11 «Համաստեղի «Գիւղը» » (Օհան Կարօ)
- 1928, 04.03 « Ծաղկեփունջ՝ նորագոյն գրականութեան» (գրական ասուլիս Համաստեղի մասին)
- 09.03 «Համաստեղի մասին»
- 15.08 «Թեյասեւեան ի պատիւ Համաստեղի»

- 1966, 22.04 Ա. Պետիկյան, «Համաստեղ».
- 30.06 «Համաստեղի մասին»
- 06.09 «Համաստեղի յոբելեանը» (Ս. Մահակեան)
- 30.11 «Համաստեղ»
- 04.12 Համաստեղին նվիրված թիվ
- Յեղափոխական Այրում** (Բեյրութ)
- 1966, թիվ 3 - 4 Համաստեղին նվիրված բացառիկ թիվ
- Յուսաբեր** (Կահիրե)
- 1924, 07.10 -25.10 «Գիւղը» (Գ. Մխիթարեան)
- 1925, 20.06 «Գիւղը» (Դ. Անանուն)
- 15.09-24.09 «Համաստեղ» (Օ. Մխիթարեան)
- 1929, 20.03 - 25 Գրական երեկոյ ի պատիւ Համաստեղի (16.03.1929)
- 04.05 - 10.05 Գրական երեկո ի պատիւ Համաստեղի
- 13.05 Համաստեղի ճառը
- 1961, 11.09 « Համաստեղի «Այծետոմարը»»
- 1966, 04.01 Համաստեղին նվիրված յոբելեանական թիվ
- 05.02 «Պարզութիւն եւ բարութիւն» (Ս. Իշխան)
- 10.02 «Քաջն Լազար եւ 13 պատմուածքներ» (Պ. Սնապյան)
- 11.02 «Յարգանք հայ տոհմիկ շունչին» (Յ. Գեղարդ)
- 21.02 «Համաստեղի «Աղօթարանը»» (Յ. Կարապետց)
- 21.02 Վկայութիւններ Համաստեղի մասին
26. 04 «Այծետոմար եւ ուրիշ բանաստեղծութիւններ» (Պ.Ս.)
- 21.05 Համաստեղին նվիրված թիվ
- 27.05 «Համաստեղի յոբելեանը Պաղդատի մեջ» (27.03.1966)
- 04.06 «Համաստեղ եւ իր գրականութիւնը» (Բենիամին Թաշեան)
- 27.08 «Համաստեղի յոբելեանը» (Սար. Սահակեան)
- 10.09 «Մտորումներ սփյուռքահայ գրականութեան շուրջ» (Ստ. Կուրտիկյան)
- 26.11 «Համաստեղ «Գիւղը»»
- 01.12 «Համաստեղ»
- 03.12 «Այց՝ Մոնթրէալի մեր զաղութիւն» (Արամ Հայկազ)

- «Համաստեղ եւ իր գրականութիւնը» (Արամ Հայկազ)
- 14.12 «Համաստեղի վերջին ժամերը» (Բ. Կռանեան)
- 21.12 «Անմոռանալի» (Վրեժ-Արմէն)
- «Վաստակաւոր գրագէտը՝ Համաստեղ» (Եղ. Սիմքէշեան)
- 1967, 18.02 «Համազգային մեծարանք Համաստեղի»
- 23.06 «Համաստեղի հետ» (Բենիամին Լուրիկեան)
- 16.11 Հորելեանական հանդէս (28.10.1966, Պատարայում)
- Հարցազրոյց գրագէտ Արամ Հայկազի հետ Համաստեղի «Յուշա-մատեան»-ին մասին»
- 25.11. «Համաստեղ կը խօսի» (1929-ի Կահիրեում ունեցած ելոյթն է)
- 29.11. «Համաստեղ՝ հանկարծամահ»
- 01.12. «Համաստեղ» (խմբագրական)
- 03.12. «Այց՝ Մոնթրէալի մեր գաղութին» (Արամ Հայկազ)
- 08.12. «Մեզի հետ էր Համաստեղ» (Արամ Աֆարեան)
- 09.12. «Համաստեղ ինք իր մասին» (գրելու ձեւն ու արուեստը)
- 10.12 - 13.12 «Համաստեղ եւ իր գրականութիւնը» (Արամ Հայկազ)
- 14.12 «Համաստեղի վերջին ժամերը» (Բիւզանդ Կռանեան)
- 16.12 «Համաստեղ» (Գաբրիէլ Թագուրեան)
- 23.12 «Վաստակաւոր գրագէտը՝ Համաստեղ» (Եղ. Սիմքէշեան)
- 1987, 31.01 «Հայրենի հողին եւ հողի մարդուն բոյրը Համաստեղի մօտ» (Մ.Ս.Հ.)
- 07.02 «Համաստեղ, «Հայաստանի լեռներու սրնգահարը» (Լ.Լոն Շանթ)
- 11.02 «Հայրենիքը Համաստեղի երեւակայութեան շարժումն աշխարհը»
- Նոր-Ղար (Երևան)
- 1998, թիվ 4 «Համաստեղի «Սպիտակ Չիաուրը» վեպի պատմականութեան մասին» (Կ.Վարդանյան)
- Պայթաղ (Բոստոն)**
- 1965, թիվ 3 «Համաստեղի հետ» (Բ. Լուրիկեան)
- «Մարդը և գրականութիւնը» (Վ. Հայկ)
- 1966, թիվ 3-4 Վերջաբան (Համաստեղի մահուան առթիւ) (Բ. Լուրիկեան)
- Սովետական գրականություն** (Երևան)

- 1965, թիվ 8 «Սփյուռքահայ գրականություն» (Ս.Կ.)
- 1966, թիվ 4 « Ամերիկան մթնում է...» (Ստ. Վարդանյան)
- թիվ 7 «Մտորումներ սփյուռքահայ գրականութեան շուրջ» (Ստ.Կուրտիկյան)
- թիվ 8 «Ղարծալ սփյուռքահայ գրականութեան մասին» (Թ. Թորանյան)
- թիվ 11 Համաստեղի մահախոսականը
- 1983, թիվ 8 «Գ. Մահարու և Համաստեղի նամակագրությունը»
- ԳՐ. ԶԱՆԻՎՅԱՆԻ ՀԱՄԱՍՏԵՂԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՈՆՉՎՈՂ ԳՐԱՊԱՍԿՈՒՄՆԵՐԸ²**
1. «Փերչենն գյուղի ճամփան» («Գրական թերթ», 1991, փետրվարի 15)
 2. «Համաստեղը՝ Կարապետնցին. նամականի» («Գրական թերթ», 1995, հունիսի 9)
 3. «Գրողի հույսն ու ճակատագիրը» («Առերեսում», 1995, թիվ 15)
 4. «Տունդարձի հավատը» («Լրագիր», 1995, նոյեմբերի 21)
 5. «Կելենենց Համբարձումը, Խարբերդի Փերչենն գյուղն ու Ամերիկայի գերեզմանոցները» («Գրական թերթ», 1996, մայիսի 24)
 6. «Կելենենց Համբարձումը, Խարբերդի Փերչենն գյուղն ու Ամերիկայի գերեզմանոցները» («Հորիզոն» (Կանադա), 1995, թիվ 6)
 7. «Համաստեղ և Կարապետնց՝ տունդարձի հավատ» («Նորք», 1998, թիվ 1)

ՀԱՄԱՍՏԵՂԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՈՆՉՎՈՂ ՄԵՐ ՀՐԱՊԱՍԿՈՒՄՆԵՐԸ

- Համաստեղի և Կ. Սիտալի նամակագրությունից («Բանբեր Երևանի համալսարանի հասարակական գիտությունների», 1996, թիվ 3, էջ 95-106):
- Համաստեղի նամակներից («Նորք», 1997, թիվ 3, էջ 99-107):
- Համաստեղի և Սիմոն Վրացյանի նամակագրությունից («Լրաբեր հասարակական գիտությունների», 1997, թիվ 2, էջ 145-154):

4. Համաստեղ և Արամ Հայկազ. Նամականի («Նոր-Ղար», 1997, թիվ 3-4, էջ 287-293):
5. Համաստեղ, «Կանանչ աչքերով աղջիկը» («Նոր-Ղար», 1998, թիվ 1, էջ 29-30):
6. Համաստեղի նամակները Գրիգոր Շահինյանին («Նորք», 1998, թիվ 2, էջ 113-122):
7. Համաստեղը գրական աշխատանքի մասին («Գարուն», 1998, թիվ 2, էջ 74-76):
8. Համաստեղի նամակները («Բագին», 1998, էջ 153-154):
9. Համաստեղը Ալսել Բակունցի մասին (զեկուցում Հայաստանի գրողների միության և ՀՀ ՊԱԱ Մ.Աթոյանի անվան գրականության ինստիտուտի գիտաժողովում նվիրված Բակունցի ծննդյան 100-ամյակին - 6 հունիսի, 1999 թ.):
10. Համաստեղի «Աղօթարանը» («Հայագիտական հանդես» (Գիտական հոդվածներ և հրապարակումներ), 1999, թիվ 2, էջ 53-56):
11. Համաստեղի և Կոստան Ջարյանի նամակագրությունից («Գարուն», 1999, թիվ 6, էջ 45-46):
12. Համաստեղ, «Սփիքին» («Աղբյուր», 1999, թիվ 7-8, էջ 24-25):
13. Հայի ազգային նկարագիրը Համաստեղի «Սպիտակ Չիավորը» վեպում («Նորք», 1999, թիվ 2, էջ 155-162):
14. Ֆիդայու ազգային նկարագիրը Համաստեղի «Սպիտակ Չիավորը» վեպում (զեկուցում Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանի կազմակերպած միջազգային գիտաժողովում նվիրված Հայկական հարցի միջազգայնացման 120-ամյակին, «Հայկական հարց-1», Երևան, 2000, էջ 132-136):
14. Համաստեղը գրականության մասին («Պատմա-բանասիրական հանդես», 2000, թիվ 2, էջ 55-67):
15. Համաստեղի «Գյուղը» և «Անձրև» ժողովածուները («Հայագիտական հանդես» (Գիտական հոդվածներ և հրապարակումներ), թիվ 3, 2000, էջ 77-83):
16. Համաստեղի «Այծետոմար» երգիծական պոեմը («Նոր-Ղար», 2000, թիվ 4, էջ 17):
17. Համաստեղի և Ն.Աղբալյանի նամակագրությունից («Նորք», 2000, թիվ 4, էջ 17):

¹ Համաստեղի ստեղծագործությունների, նրա գրականության վերաբերյալ նյութերի առաջին մատենագիտական ցանկը կազմել է Գր. Շահինյանը:
² Այս ցանկը մեզ է տրամադրել Գր.Ջանիկյանը:

Համաստեղ (Գրող)

Այս նամակագրությունը հրատարակվում է ՀՀ ՊԱԱ Մ.Աթոյանի անվան գրականության ինստիտուտի կողմից 2000 թ. 11-ին Երևանում հրատարակված «Հայագիտական հանդես» (Գիտական հոդվածներ և հրապարակումներ) թիվ 2-ի 53-56 էջերում հրատարակված հոդվածի հիման վրա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մ. Խաչատրյան - Համաստեղի «Մեր պարտեզի օրագրեն» շարքը	3
Լ.Արզումանյան - Դժվար խոսակցություն	11
Վ. Սարգսյան - Եվրոպական և ռուսական ռոմանտիզմների ազդեցությունը հայկական ռոմանտիզմի տիպաբանության վրա	22
Կ.Մատինյան - Պետեր Հանդլեի դրամաների տիպաբանությունը	34
Ն.Ավոյան - Ասքապատումը որպես ռեալիստական բաղադրիչ Ա.Այվազյանի ստեղծագործություններում (ռուսերեն)	43

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ն. Մկրյան - Տրոիկած բացահայտչի կառուցվածքը և իմաստային առանձնահատկությունները անգլերեն լեզվում	47
Ա. Ապրեսյան - Լրագրային տեքստի կառուցվածքի հաղորդակցական և գործաբանական առանձնահատկությունները	58
Շ. Պարոնյան, Լ. Բեքարյան - Հարցականը քաղաքավար երկխոսության մեջ (անգլերեն)	67
Գ. Գիրունյան - Ներտեքստային աղբյուրները և թարգմանչի գրական մտահոգությունը (անգլերեն)	78
Ա. Կնյազյան - Համեմատությունը որպես Վ. Վուլֆի անհատական ոճի առանձնահատկություն (ռուսերեն)	85
Ն. Հարությունյան - Դարձվածաբանական միավորների թարգմանությունը որպես մշակույթի շփում և բախում (ռուսերեն)	100
Ն. Հարությունյան - Անգլերեն դարձվածաբանության թարգմանչական հայացակերպը մշակույթների երկխոսության մեջ (ռուսերեն)	115

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Ն. Հարությունյան - Հայ կրթական գործը Սիրիայում	128
Պ. Բալայան - Խոսքային գործունեության կոգնիտիվ կողմը (ռուսերեն)	137
Ա. Ավազյան - Հանրակրթական դպրոցի տարրական դասարանների աշակերտների զարգացման վրա երկլեզվության ազդեցության հետազոտումը (ռուսերեն)	151
Ա. Սաղաթեյան - Հայաստանում դիստանցիոն կրթության ձևավորման նախադրյալները և զարգացման հեռանկարները (ռուսերեն)	159

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռ. Աղուզումցյան, Մ. Պետրոսյան - Հոգեբանական մեթոդների կիրառումը օժտված երեխաների ուսուցման կազմակերպման գործընթացում	170
--	-----

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

4. Սեդրակյան – Հայաստանը աշխատանքի բաժանման ներկա համակարգում 179

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

5. Խաչատրյան – Համաստեղի ստեղծագործությունների մատենագիտական ցանկ 187

Շապիկի ձևավորումը
Համակարգչային ձևավորումը

**ԿԱՐՂԱՆ ԳԱԲՐԻԷԼՅԱՆԻ
ԿԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**



«ԱՍՈՂԻԿ» հրատարակչություն

Ստորագրված է տպագրության 14.03.2001 թ.
Ֆորմատ 60x84/16
Թուղթ՝ օֆսեթ
Պատվեր՝ № 57

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» ՍՊԸ-ի տպարանում:
Ք. Երևան, Ավան, Չարենցի քաղ. 9/22
Հեռ. 58.22.99, 40.49.82
E-mail: print@netsys.am